Աստծո Սերը, հենց որ այն զգացվում է մարդու կողմից, մի բան է, առանց որի ոչ մի մարդ չի կարող ապրել

Երկուշաբթի, 1 հոկտեմբերի, 2012թ, ցերեկվա ժ 04:30

Իմ սիրելի աղջիկ, պետք է ընդունեք, որ երբ Իմ հետևորդները հավատում են այս Պատգամներին, այն կբերի նրանց հոգու տառապանք ժամանակ առ ժամանակ:
Շատերը կուրախանան, երբ կարդան Իմ Սուրբ Խոսքը, և կընդունեն այն որպես հրաշք:
Ուրիշները նույնպես կընդունեն Իմ Պատգամները, բայց որոշ օրերի նրանք երկու մասի կբաժանվեն կասկածներից, որոնք կտեղան նրանց վրա: Այդ կասկածները բնական են:
Ոմանք շարունակ հարց կտան, արդյո՞ք դրանք ճշմարիտ Երկնքից են գալիս: Հետո նրանք կլցվեն տանջանքով, որովհետև գիտեն, որ իրենց կյանքը փոխվելու վրա է, և որ իրենք ականատես կլինեն Երկրորդ Գալուստին:
Դա նշանակում է, որ մինչ այժմ իրենց ապրած կյանքը կփոխվի անճանաչելիության աստիճան:
Շատերի համար դա վախեցնող է, որովհետև նրանք ցանկանում են կառչել իրենց հին ինքնագոհ կյանքից անկախ նրանից, թե որ քան դժբախտ էին:
Ապագայի վախը, Աստծո Զեռքի վախը, և Սատանայի բանակի վախը տանջում են նրանց: Սակայն, մինչ Իմ Պատգամները կարող են վախ առաջացնել նրանց սրտերի մեջ, երբեմն նրանք բերում են նաև սփոփանք:
Քանի որ մեկ բան հաստատ է: Նրանք կզգան Իմ Սուրբ Հոգին իրենց հոգու մեջ, և հենց որ դա տեղի ունենա, նրանք կծանոթանան Աստծո Սիրուն:
Աստծո Սերը, հենց որ այն զգացվում է մարդու կողմից, մի բան է, առանց որի ոչ մի մարդ չի կարող ապրել: Այն բերում է խաղաղություն: Ուստի, անկախ նրանից, թե որքան վախեցած կլինեք դուք, Իմ հետևորդներ, դուք պետք է հիշեք, որ Ես՝ Հիսուսը, երբեք չեմ լքի ձեզ:
Դուք Իմն եք:
Ես ձեր հոգիներում եղած Կյանքն եմ: Իմ միջոցով դուք կփրկվեք: Ես լի եմ Գթասրտությամբ հոգիների հանդեպ, ովքեր շրջվում են դեպի Ինձ օգնության համար:
Ես թույլ չեմ տա որ տառապեք Սատանայի հետևորդների ձեռքում: Ես կծածկեմ ձեզ Իմ Թանկագին Արյամբ: Դուք ոչինչ չունեք վախենալու:
Դրա փոխարեն ձեզ տրվում են շնորհներ՝ նախապատրաստվելու համար: Հիմա դուք պետք է լինեք քաջ, թույլ մի տվեք որ կասկածները ամպեն Իմ հանդեպ ձեր ունեցած սերը, կամ կուրացնեն ձեզ այս Պատգամների Ճշմարտացիության հանդեպ:
Դրանք Իմ Ընծան են ձեզ: Դրանք տրվում են ձեզ, որպեսզի դուք պաշտպանված լինեք և ապահով՝ վնասից:
Միշտ խնդրեք Ինձ նվազեցնել ձեր վախը, քանի որ վախը ցանվում է ինչպես դժգոհության սերմ ձեր մտքի մեջ չարի կողմից, որպեսզի շեղի ձեզ:
Ես օրհնում եմ ձեզ: Ես տալիս եմ ձեզ խաղաղություն: Ես տալիս եմ ձեզ Իմ Պաշտպանությունը: Վստահեք Ինձ միշտ:
Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Իմ Որդու Եկեղեցու առաջնորդներից շատերը ոչինչ չեն ասում: Նրանք այլևս հրապարակայնորեն չեն պաշտպանում Իմ Որդու Սուրբ Անունը

Երեքշաբթի, 2 հոկտեմբերի, 2012թ., ցերեկվա ժ 03:30

Զավակս, շարժերը՝ վիրավորելու համար Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի Անունը, ավելանում են:
Բավական չէ, որ նրանք մերժում են Նրան, շատերը ցանկանում են վիրավորել Նրա պատկերը այն մարդկանց մտքերի մեջ, ովքեր հավատում են Նրան:
Իմ Որդու Մարմնի խաչումը՝Նրա Եկեղեցու խաչումը, աճում է:
Իմ Որդու Եկեղեցու առաջնորդներից շատերը ոչինչ չեն ասում: Նրանք այլևս հրապարակայնորեն չեն պաշտպանում Իմ Որդու Սուրբ Անունը: Նրանք արիություն չունեն պաշտպանելու Իմ Որդու Մարմինը՝ երկրի վրա Նրա Եկեղեցին:
Շատերը չեն ցանկանում գրավել անցանկալի ուշադրություն՝ անցյալում քահանաների մեղքերի պատճառով: Շատերը պարզապես չունեն պահանջվող ուժեղ հավատը՝ լինելու ճշմարիտ վկա Իմ Որդու ուսուցումների հանդեպ:
Այնքան շատերն աշխարհում չեն հավատում Իմ Որդու գոյությանը, և դա Նրան ստիպում է լաց լինել:
Այնքան շատերը, ովքեր գիտեն ճշմարտությունը, կարծում են թե ընդունելի է ցույց տալ անհարգալից վերաբերմունք՝ լսելով հայհոյություններ և լուռ մնալով:
Զավակներս, դուք պետք է բացահայտորեն և առանց վախի ընդունեք Իմ Որդու Խաչելության ճշմարտությունը: Մարդիկ կլսեն: Ձեզ կլսեն: Եթե Իմ Որդու բոլոր սպասավորները լուռ մնան, ապա ո՞վ կխոսի Իմ Որդու մասին:
Ո՞վ կտարածի Նրա Սուրբ Խոսքն այս ժամանակ, երբ Աստծո զավակներից այնքան շատերն են մերժում Աստծո գոյությունը:
Շատ շուտով նրանք արդարացում չեն ունենա: Երբ նրանք տեսնեն իրենց հոգիների վիճակը, կհասկանան առաջին անգամ, որ իրենք հոգի ունեն:
Աղոթեք, որ դրանից հետո նրանք դառնան ավելի ուժեղ, և որ նրանք դառնան Քրիստոսի ճշմարիտ զինվորները:
Ձեր Սիրող Մայր
Մայր Փրկության

Քրիստոնեության վրա հարձակվում են մեկ հիմնական պատճառով

Չորեքշաբթի, 3 հոկտեմբերի, 2012թ, ցերեկվա ժ 01:30

Ես քո սիրելի միստիկ ամուսինն եմ, Մարդու Որդին, ծնված Անարատ Կույս Մարիամից:
Իմ սիրելի աղջիկ, ամեն սարսափի Ես ականատես եղա Գեթսեմանիի պարտեզում, երբ չարն Ինձ խայթում էր /ցույց տալով այն/ Իմ Աչքերի առջև, ինչ ծավալվում է հիմա

աշխարհում:
Մարդիկ ամենուր կորցրել են հավատը: Նրանք թափառում են խառնաշփոթության ծովի մեջ, հավտուրացության վիճակում, որի նմանն աշխարհը չի տեսել նախկինում այսպիսի մեծ մասշտաբով:
Սերը միմյանց հանդեպ մեռել է:
ՈՒրիշի կարիքների հանդեպ հարգանքն այլևս բնավորության գիծ չի ընդունվում, որով կարելի է հիանալ:
Ագահությունը, ընչաքաղցությունն ու նախանձը վերահսկում են շատերի միտքն այսօր աշխարհում: Սառը սրտով, նրանք այլևս չեն արժևորում կյանքն ինչպես կա, և մարդասպանությունից բացի ոչնչի մասին չեն մտածում: Դա ընդունվում է այնպես, ասես այդպես էլ պետք է լինի:
Քրիստոնեության վրա հարձակվում են մեկ հիմնական պատճառով: Դա նրա համար է, որպեսզի թույլ տրվի ձեր երկրներում հեշտությամբ ընդունել այնպիսի օրենքներ, որոնք թողություն են տալիս մեղքին:
Կլանվածությունը կեղծ կրոններով և կեղծ կուռքերով համատարած է:
Իմ Եկեղեցին փլուզվում է, իսկ Իմ սրբազան սպասավորները մեծ մասամբ չեն շեշտում մեղքի վտանգը և հավիտենական կյանքի ճշմարտությունը:
Ատելությունը, պատերազմը, ագահությունը, ընչաքաղցությունը, նախանձն ու սեփական անձի հանդեպ սերը՝ բոլորը կապված են մի կեղծ վիճակով, մի վիճակ, որը նմանություն չունի Իմ Ուսուցումների Ճշմարտության հետ:
Այն ժամանակ, Գեթսեմանիի պարտեզում Ես գիտեի, որ այսօր այս սերունդը Խաչի վրա Իմ Մահին չի նայի այնպես, ինչպիսին այն եղել է: Սա այն ցավն էր, որը պատռեց Իմ Սիրտը թրի պես:
Մարդու համար Իմ կատարած Զոհաբերությունը, նրան Իմ Հոր Աչքում ազատագրելու համար, այսօր չի ճանաչվում: Որքան շատ /բան/ են նրանք մոռացել: Որքան շատ /բան/ նրանց չի ասվել: Եվ այդ ամենը հանդուրժողականության մեղքով է, որը ներկայացվում է աշխարհին որպես լավ բան:
Պատերազմներն ու ատելությունը տարածվում են աշխարհում վիրուսի պես, մինչ նրանք պլանավորվում են չարի կողմից: Իմ հետևորդների ցավը կմիանա Իմ ցավին, երբ ականատես կլինեն այն պղծություններին, որոնք դուրս կթքվեն կառավարությունների այն առաջնորդների կողմից, ովքեր հետևում են սատանայի կողմից իրենց հոգիներում բուն դրված ստերին:
Սատանան և նրա չարքերը շատ ուժեղ են: Երբեք ոչ մի րոպե չհավատաք, թե հեշտ է թուլացնել օղակը, որը նրանք ունեն այն մարդկանց վզին, ովքեր թույլ են տվել որ նա և իր չարքերը ներթափանցեն իրենց հոգիների մեջ: Նրանք հեշտությամբ տեղի չեն տա և կարգելեն հոգիներին, ովքեր ցանկանում են շրջվել դեպի Ինձ՝ իրենց Հիսուսը, օգնության համար, թողնելով նրանց անօգնական:
Այդ հոգիների համար տառապալից կլինի աղոթելը: Բառերը դուրս չեն գա նրանց բերանից: Նրանք ամբողական հակակրանք կզգան Իմ հանդեպ: Որքան էլ փորձեն, դա կլինի մի դժվար առաջադրանք:
Նրանց, ովքեր ասում են, թե իրենք լավ մարդիկ են, ովքեր վնաս չեն պատճառում ուրիշներին, բայց չեն ընդունում Ինձ՝ Հիսուսին, իրենց կյանքում, իմացեք հետևյալը: Դուք Քրիստոսի հետևորդ չեք: Եթե չեք գալիս Ինձ մոտ, չեք կարող ընդունվել Իմ Հոր Թագավորություն:
Իմ Հոր Թագավորություն մտնելը պահանջում է նախապատրաստություն: Սատանան կարող է այնքան արագորեն շարժվել հոգիներ շեղելու համար, որ շատերն անտեղյակ

են մնում:
Աշխարհում մեծ անհանգստության այս ժամանակ, և Իմ Հոր՝ Աստծո, Ամեն Բանի Արարչի մասին իմանալու պակասը կարող է հանգեցնել միայն մեկ բանի:
Աղետի: Երկնային պատիժները դուրս կհեղվեն աշխարհի վրա մարդկությանը փրկելու համար, մարդկությանը մաքրագործելու համար:
Եթե մարդիկ մեժեն լսել, նրանք չեն լսի Ճշմարտությունը:
Ճշմարտությունը կփրկի ոչ միայն երկրի վրա նրանց կյանքը, այլև կտա նրանց Հավիտենական Կյանք:
Ճշմարտությունն ընդունել չկարողանալը հանգեցնում է մահվան, թե՛ մարմնի, և թե՛ հոգու:
Եկել է ժամանակը մարդկության համար, որ ընտրություն կատարի: Ես չեմ կարող ստիպել նրանց, որ հետևեն Ինձ: Չնայած այն բոլոր ընծաներին, շնորհներին ու հրաշքներին, որոնք կտրվեն նրանց, նրանք կշարունակեն շրջել իրենց մեջքը:
Չնայած Իմ Մեծ Գթասրտությանը, ոմանք կշարունակեն ըմտրել մահը՝ կյանքի հանդեպ:
Ձեր Հիսուս

Հայր Աստված. Իմ Արդարադատության Ձեռքը սպասում է պատժելու համար այն կառավարություններին, որոնք նյութում են վնասել Իմ զավակներին

Հինգշաբթի, 4 հոկտեմբերի, 2012թ, ցերեկվա ժ 02:55

Իմ սիրելի աղջիկ, Ես ցանկանում եմ որ դու իմանաս, որ մինչ աշխարհը ստիպված կլինի դիմանալ մի մեծ մաքրագործման, որը հաճելի չի լինի, Իմ Գթասրտությունը մեծ է:
Ես Գթասրտության օվկիանոս եմ, և կիրականացնեմ մեծ փոփոխություններ՝ վստահանալու համար, որ Իմ բոլոր զավակները կփրկվեն աղետից: Աղետը, որի մասին Ես խոսում եմ քեզ հետ, ներառնում է մի գաղտնի չար ուժի աշխատանքն աշխարհում, ովքեր փորձում են վերահսկել յուրաքանչյուր ազգի, իրենց սեփական չար օգուտի համար:
Այդպիսի հոգիներից այնքան շատերն են մերժում Իմ սիրելի Որդու Գթասրտությունը: Այնքան շատերը չեն ճանաչի Նրան: Նրանք շարունակում են անասելի տառապանք պարտադրել նրանց վրա, ում վերահսկում են, և չեն կարողանում ընդունել, որ իրենց մեղքերն աննկատելի չեն մնա: Նրանք կարող են պայքարել Իմ Ձեռքի Զորության դեմ, բայց Իմ Ձեռքը ցած կիջնի նրանց վրա և կոչնչացնի նրանց:
Նրանք կճանաչեն Աստծո Զորությունը, ժամանակի ընթացքում, բայց նրանցից շատերի համար չափազանց ուշ կլինի:
Շուտով ողջ մարդկությունն ականատես կլինի Իմ յուրաքանչյուր Գործողությանը, ներառյալ՝ մեծ հրաշքները: Ես, Իմ Մեծ Գթասրտությամբ, որը կկլանի մարդկությանն ինչպես մի մեծ օվկիանոս, կանեմ այն ամենն ինչ կարող եմ, որ փրկեմ մարդկությանը: Ոչ մի մարդ անմասն չի մնա Իմ Ընծաներից:
Երբ դա տեղի ունենա, Ես կհետապնդեմ այն մարդկանց, ովքեր մի կողմ կհրեն Ինձ, չնայած նրանք կիմանան, թե ով Եմ Ես:

Այնուհետև, աշխարհի այն առաջնորդները, ովքեր չեն կատարի Իմ Աստվածային Օրենքները, և ովքեր խարազանում են աշխարհը Իմ զավակների հանդեպ դաժանությամբ, ցած կգլորվեն: Այդ ժամանակ Ես նրանց թույլ չեմ տա փախչել Իմ Աստվածային Արդարադատությունով:
Նրանք նախազգուշացվում են, այս պատգամով, որ հիմա դադար տան: Նրանք պետք է աղոթեն ուղղորդություն ստանալու համար, եթե անհարմար են զգում կամ ճնշման տակ են, ընդունելու համար օրենքներ ազգերի վրա, որոնք դժբախտություններ կպատճառեն:
Ես հիմա տալիս եմ նրանց այս ժամանակը, որպեսզի դադարեցնեն այն, ինչ անում են, և խնդրեն Ինձ՝ օգնել իրենց դեմ կանգնել այն չար ռեժիմներին, որոնք պլանավորվում են իրենց համերկրացիների դեմ:
Նրանք գիտեն, թե Ես ինչ մասին եմ խոսում:
Ես մարդկային ռասայի Արարիչն եմ: Ես ճանաչում եմ Իմ յուրաքանչյուր զավակի: /Ես գիտեմ, թե/ նրանք ինչ են տեսնում ինչ են զգում, ինչպես են մտածում: Ես գիտեմ նաև նրանց միջից այն մարդկանց, ովքեր խոստումներ են տվել այնպիսի գործողությունների համար, որոնք ահռելի տառապանք են առաջանցում մարդկանց համար աշխարհով մեկ:
Իմ Գթասրտության Ձեռքը սպասում է՝ ետ բերելու համար նրանց Իմ Թագավորության ապաստանի մեջ:
Իմ Արդարադատության Ձեռքը սպասում է պատժելու այն կառավարություններին, ովքեր նյութում են վնասել Իմ զավակներին: Ձեզ թույլ չի տրվի այդ տառապանքը պատճառել:
Քանի որ հենց որ դուք ներմուծեք օրենքներ, որոնք ատելի են Ինձ, որոնք ծրագրված են վերահսկել նրանց, ում դուք ծառայում եք, Ես կուղարկեմ այնպիսի պատիժ, որ ոչ մի մարդ կասկած չի ունենա թե ինչն է այդպիսի պատժի պատճառը:
Դուք Իմ զավակներն եք, և Ինձ պետք է դուք դիմեք պաշտպանության համար: Առանց Իմ պաշտպանության դուք կլինեք Սատանայի ողորմածության տակ:
Միայն մի մոռացեք, որ նա՝ Սատանան, ատում է ձեզ բոլորիդ: Սակայն նրա հզոր ու հմայիչ ուղիների պատճառով դուք գնում եք իշխանություն հետամտելու նրա ճանապարհով ինչպես ստրուկներ:
Ընտրեք իշխանությունը այս երկրի վրա, որը ձեզ կբարձրացնի և կհասցնի ճանաչման Տիրոջ ուղիներից դուրս, և դուք մի կողմ կնետվեք:
Այս նախազգուշացումը տրվում է, վստահանալու համար, որ դուք հասկանաք, որ միայն մեկ Արարիչ կա: Միայն մեկը, ով արարեց մարդկությունը: Միայն մեկը, ով իշխանություն ունի բերելու այն ամենի վախճանը, որ գոյություն ունի երկրի վրա:
Աստված Ամենաբարձյալ
Արարիչ ամեն տեսանելի և անտեսանելի բաների

Աստծո Լույսը ներկա է ձեզանից յուրաքանչյուրի և ամեն մեկի մեջ

Շաբաթ, 6 հոկտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 11:05

Իմ սիրելի աղջիկ, Ինձ ճշմարիտ սիրելու համար դու պետք է տեսնես ուրիշներին Իմ Աչքերով:

Երբ նայում ես մեկ այլ անձնավորության, ուշադիր նայիր և փորձիր տեսնել Իմ Ներկայությունը, քանի որ Ես ներկա եմ բոլոր հոգիների մեջ, նույնիսկ՝ սևացածների: Ես այնտեղ եմ: Նայիր, և կտեսնես Ինձ: Սա ամենաարտակարգ շնորհներից մեկն է՝ տրված Իմ Հավիտենական Հորից Իր զավակներից յուրաքանչյուրին:
Աստծո Լույսը նեկա է ձեզանից յուրաքանչյուրի և ամեն մեկի մեջ:
Դա սեր է, և յուրաքանչյուր հոգի ունի սիրելու կարողությունը:
Երբ դուք տեսնեք ուրիշներին Իմ Աչքերով, դուք սեր կզգաք, և դա կդիպչի ձեր հոգուն այնպիսի ձևով, որը չեք կարող մերժել: Այդ սերն իրական է, սակայն դուք չեք կարող տեսնել այն կամ դիպչել նրան: Ձեզ համար նաև դժվար կլինի բացատրել այն ուրիշներին: Սակայն դա այնտեղ է:
Եթե Աստծո բոլոր զավակները կարողանային պատվել Իմ Հոր Աստվածային Ներկայությունն աշխարհում, Նրա զավակների մեջ, ապա խաղաղությունը կթագավորեր երկրի վրա: Փնտրեք սեր, և դուք կգտնեք այն:
Ժամանակ տրամադրեք մտածելու այն մասին, ինչ Ես հիմա ասում եմ ձեզ: Աստծո Սիրո Լույսը նման է մի փայլող աստղի՝ ներկա յուրաքանչյուր հոգու մեջ: Ոմանց մեջ այն փայլում է պայծառորեն, և կարող եք զգալ սերն այդ մարդուց ինչպես է պարուրում ձեզ: Ուրիշների մոտ այն մի խամրած կայծկլտանք է՝ դժվար՝ գտնելու համար, սակայն ամեն դեպքում այն այնտեղ է:
Երբ նայում եք մեկդ մյուսին, մտածեք այդ մասին այս ձևով: Աստված ստեղծել է ձեզանից յուրաքանչյուրին: Դուք եղբայրներ և քույրեր եք Նրա Աչքում: Նրան այնքան շատ ուրախություն է պատճառում, երբ Նա տեսնում է Իր զավակներին՝ միմյանց հանդեպ սեր և հարգանք ցույց տալիս:
Երբ նրանք կռվում են իրար դեմ, ուրիշներին դժբախտություն ու տառապանք պատճառում, Նա սարսափելի ցավ է զգում: Ինչպես ցանկացած ծնող, Նրան վիրավորում է, երբ Իր զավակները չեն կիսում Իր Սերը, այն Սերը որի միջոցով իրենք ստեղծվել են:
Հիշեք նաև երբ վիրավորում եք միմյանց, որ վիրավորում եք Իմ Հորը: Նա զգում է այն ցավը, որը դուք պատճառում եք Իր զավակներին:
Երկու անգամ մտածեք հաջորդ անգամ, երբ կոպտորեն դատեք մեկ ուրիշին կամ ատելություն ցույց տաք միմյանց հանդեպ: Երբ անում եք այդ բաները, դրանք տհաճ են Իմ Հորը:
Եթե որևէ մեկը վիրավորում է ձեզ, աղոթեք նրա համար: Քանի որ երբ լարվածություն և սիրո պակաս կա երկու մարդու միջև, դրա պատճառը չար ոգիներն են:
Բարձրացեք այդ գայթակղությունից վեր: Սիրեք ուրիշներին: Վարվեք նրանց հետ հարգանքով: Նայեք նրանց, ասես Աստծո Աչքերի միջով: Երբ դա անեք, սեր կգտնեք: Ձեր համար ավելի հեշտ կլինի ապրել միմյանց հետ և ընդունել միմյանց թերությունները:
Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Ես արյան արցունքներ եմ լացում նրանց համար, և Իմ Սիրտը ծանրացած է

Կիրակի, 7 հոկտեմբերի, 2012թ, առավոտյան ժ 11:00

Զավակս, խնդրում եմ աղոթիր Իմ կորած զավակների համար, որոնց թիվն ավելանում է օրեցօր: Նրանք չեն հավատում, ոչ էլ կարող են հավատալ Իմ Որդուն, և շրջվում են հակառակ կողմ:
Ես արյան արցունքներ եմ լալիս նրանց համար, և Իմ Սիրտը ծանրացած է: Որքան կորած են նրանք, և որքան դատարկ են զգում:
Ես աղոթում եմ, որ Աստված՝ Իր Գթասրտությամբ, շուտով կբացի նրանց կարծրացած սրտերը:
Նախազգուշացումը մոտ է, զավակս: Իմ զավակները կարիք ունեն նախապատրաստվելու: Նրանք, ովքեր խուսափում են այս Սուրբ Պատգամներից, Իմ Որդուց և Իմ Հավիտենական Հորից, ստիպված կլինեն պատասխան տալ Աստծուն:
Շատերն են վնասել այս Առաքելությանը և խրախուսել են հոգիներին մի կողմ շրջվել: Այդպիսի շատ հոիգներ են մահացել այդ ժամանակից ի վեր մահացու մեղքի մեջ: Եթե նրանք ընդունեին Խաչակրաց աղոթքների միջոցով մարդկությանը տրված աղոթքները, նրանք կարող էին փրկվել:
Նրանք, ովքեր չեն ընդունի այս Պատգամները, չպետք է աշխատեն չարի հետ՝ վնասելու համար Աստծո Խառսքը: Դուք պետք է աղոթեք այն անհրաժեշտ օգնության համար, որ խաղաղություն գտնեք ձեր ներսում:
Մարգարեացվել է, որ վերջին ժամանակների մարգարեն չի ընդունվի, չնայած շատ դարձի կհասնեն Աստծո Խոսքի տարածման միջոցով:
Ի վտանգ ձեզ կլինի մերժել այն օգնությունը, որն ուղարկվում է Երկնքից այս ժամանակ, օգնելու համար ձեզ փրկել ձեր հոգիները:
Մի վիրավորեք Իմ Որդուն՝ լսել չկարողանալով: Դուք կարող եք ուշադրություն չդարձնել Երկնքից եկող այս Պատգամները կարդալուց հետո, բայց դուք պետք է առաջին հերթին լսեք:
Ձեր ազատ կամքը նշանակում է, որ կարող եք ընտրել, թե որ ճանապարհով քայլեք:
Ձեր ազատ կամքը չի նշանակում, որ իրավունք ունեք դիտավորյալ կերպով հայհոյել Սուրբ Հոգու դեմ:
Երբ Նախազգուշացումը տեղի ունենա, դուք կլցվեք Ճշմարտության Լույսով:
Ձեր հոգին կլուսավորվի, և դուք կտեսնեք թե ինչ լավ արարքներ, ինչ վատ արարքներ եք կատարել ձեր կյանքի ընթացքում: Այդ էտապում ձեզնից շատերը կգրկեն Աստծո Սերը: Ցավոք, շատերը կլինեն չափազանց համառ՝ ընդունելու համար իրենց արած սխալները: Նրանք մի կողմ կնետվեն և սոսկալի ձևով կտառապեն:
Նախապատրաստված եղեք միշտ: Ժամանակը կարճ է:
Ձեր սիրող Մայր
Մայր Աստծո
Մայր Փրկության

Իմ Երկրորդ Գլաուստն ազդարարող հայտարարությունը հանկարծակի կլինի

Երկուշաբթի, 8 հոկտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 07:00

Իմ սիրելի աղջիկ, Ես կոչ եմ անում Իմ բոլոր հետևորդներին ուժեղ լինել այս ժամանակ:
Իմ Սուրբ Խոսքը՝ Իմ Ընծան մարդկությանը, որ տրվում է ձեզ այս պատգամների

միջոցով, շատ քննադատության առարկա կլինի:
Դուք պետք է ուժեղ մնաք, երբ Իմ Խոսքը մասնատվի և նվաստացվի: Դա շատ դժվար կլինի, բայց դուք պետք է դիմանաք այդ տառապանքին, քանի որ դա միայն սկիզբն է: Թշնամին կբարձրանա և կպատառոտի Իմ պատգամները, որոնք տրվում են ձեզանից յուրաքանչյուրին՝ հոգիների փրկության համար:
Նա հաշվում է յուրաքանչյուր հոգու, որին գրավում է, հետո հեռացնում Իմ պատգամներից: Նա անում է դա առաջին հերթին հավատացողներին գայթակղելու միջոցով, որպեսզի նրանք չաշխատեն Ինձ հետ ձեր եղբայրներին ու քույրերին փրկելու համար: Նա չի ցանկանում որ դուք աղոթեք նրանց հոգիները փրկելու համար:
Իմ եկեղեցու ցակնացած սպասավոր, որ արգելում է ձեզ աղոթել Իմ Խաչակրաց արշավանքի աղոթքները, ձեր աղոթքների կարիքն ունի: Նրանք չեն կարող կանգնեցնել Իմ աղոթքները տարածվելուց: Երբ նրանք դա անում են, նրանք ձեր օգնության կարիքն ունեն: Ցավոք, շատ հոգիներ կհեռացվեն Իմ առաքելությունից, որը իր տեսակի մեջ վերջինն է երկրի վրա:
Այս ժամանակները կտեսնեն Իմ Եկեղեցու մեջ եղած բաժանման ավելի մեծացումը: Մի մասը՝ կտառապի պաշտպանելու համար Իմ Կտակարանը, մյուսը՝ կփորձի վերաստեղծել Իմ Եկեղեցին, ժամանակակից դարձնել Իմ ուսուցումներն ու բերել պիղծ օրենքներ Իմ Եկեղեցու մեջ:
Ոտքի կանգնեք խիզախությամբ և միավորվեք, քանի որ այդ ժամանակն արդեն հասել է ձեզ վրա, և դուք կլսեք այդ նոր պրակտիկաների մասին, որոնցից ոչ մեկը չի համապատասխանում Իմ ճշմարիտ Կտակարանին, Իմ ուսուցումներին ու Ճշմարտությանը:
Այդ փորձությունները կգան մեծ բարիկադների պես: Դուք, Իմ աշակերտներ, կզգաք թակարդն ընկած: Դուք անօգնական կզգաք, և ձեր արցունքները կհոսեն:
Ձեր թուլությունը կլինի ձեր ուժը: Ձեր տառապանքի միջոցով է, երբ կտեսնեք այդ սարսափելի խարազանումը, որ ուժեղ կդառնաք:
Յուրաքանչյուր փորձության համար, որ դուք կդիմանաք Իմ Անվամբ, Ես ձեզ նույնիսկ ավելի ուժեղ կդարձնեմ: Տոկուն եղեք, և Ես կօրհնեմ ձեզ զորության, արիության և համոզմունքի շնորհով:
Դուք Իմ բանակն եք, Իմ լույսի ճառագայթն աշխարհում: Ամեն փորձ կարվի՝ մարելու համար այդ լույսը, բայց՝ անօգուտ:
Ձեր լույսի ճառագայթը՝ Իմ հանդեպ ձեր սերը, կլուսավորվի այնպես, որ այն կդառնա լույսի փարոս, հետո՝ մի մեծ կրակ: Սուրբ Հոգու այդ կրակը, որը կբռնի ձեզանից յուրաքանչյուրին, իր բոցերը կտարածի աշխարհի ամեն անկյունում:
Այդ դուք եք, Իմ թանկագին բանակ, որ կանեք դա: Ձեզ ուղղություն կտրվի Երկնքից: Դուք առաջ կքայլեք: Դուք ոտնակոխ կանեք խեղճ հոգիների չար բանակը, ում թելադրում է Սատանան, և նրանք անզոր կլինեն ձեր դեմ:
Դրանից հետո շատ շուտով Իմ Մեծ հայտարարության Փառքը կցուցադրվի աշխարհում:
Իմ Երկրորդ Գալուստն ազդարարող հայտարարությունը հանկարծակի կլինի: Այն կլինի նաև անսպասելի, չնայած դուք լավ նախապատրաստվել եք: Այդ ժամանակ դուք կստանաք /ձեզ/ կտակված Հավիտենական Կյանքի մեծ Ընծան:
Ձեր Հիսուս

Այս նոր մեկ համաշխարհային կրոնը մեծարանք կմատուցի գազանին

Երեքշաբթի, 9 հոկտեմբերի, 2012թ., երեկոյան ժ 09:30

Իմ սիրելի աղջիկ, շատ հոգիներ են զգոն հիմա, մինչ ականատես են լինում այն արագ փոփոխություններին Իմ կաթոլիկ եկեղեցու մեջ, որոնք հիմա սկսում են ի դերև գալ: Նշանները սկսում են ցույց տալ այն ամենը, ինչ Ես մարգարեացա քո միջոցով:
Մատչելի պատարագների պակասը տեսանելի է: Սուրբ Հաղորդությունն այլևս հեշտությամբ հասանելի չէ: Խոստովանության խորհուրդը սահմանափակ է Իմ շատ եկեղեցիներում:
Իմ եկեղեցիներից շատերը քահանաներ չունեն՝ դրանք կառավարելու համար: Տառապանքի այս ժամանակ այնքան շատերն են լքում Իմ եկեղեցիները, որ շուտով այդ եկեղեցիները կտրվեն առևտրային սեփականատերերին:
Մինչ քրիստոնյաների հավատը փորձության է ենթարկվում, կարևոր է, հետևաբար, շարունակել Իմ Խաչակրաց աղոթքներն աղոթելը: Շուտով նոր սպասավորներ կներկայացվեն կաթոլիկ և մյուս քրիստոնյա եկեղեցիներում:
Սկզբում կրոնական տարբերությունները կվերացվեն եզրերից: Հետո, կարճ ժամանակի ընթացքում, դուք չեք ճանաչի Իմ Ուսուցումները, քանի որ դրանք աննկատելիորեն անհետացված կլինեն: Դրանց տեղում կլինեն աղոտ, բայց պոետիկ խոսքեր, որոնք կքարոզեն մեղքի հանդուրժողականություն:
Սկզբում չկասկածող եկեղեցի գնացողները չեն նկատի ներկայացվող ստերը: Հետո, Իմ հետևորդներին կհետապնդի մի խորը սնհանգիստ զգացողություն, որ ինչ-որ բան ճիշտ չէ:
Վերջնական խաբեությունը կլինի, երբ Սուրբ Խորհուրդները կփոխարինվեն հեթանոս փոխարինողներով:
Այս ամենի վրա կնախագահի կեղծ մարգարեն, ով կհայտարարի թե ինքը մեկի մեջ միավորված բոլոր կրոնների ամենաբարձր քահանան է: Այս նոր մեկ համաշխարհային կրոնը մեծարանք կմատուցի գազանին:
Բոլոր նրանք, ովքեր կուրորեն կհետևեն, կկլանվեն գազանի կողմից և ընդմիշտ կորած կլինեն Ինձ համար:
Այն արագությունը, որով դա տեղի կունենա, կսարսափեցնի Իմ հետևորդներին: Այդ պլանը զգուշությամբ կառավարվում է: Այդ ակցիան՝ ուղղված փոխելու քրիստոնյաների ատելությունը՝ ընդունելու համար աշխարհիկ օրենքներ, հմտորեն կատարվում է:
Այն պլանավորվում է շատ ազգերի մեջ մի խմբի կողմից, որն օգտագործում է հայտնի անձնավորություններին ու առաջնորդներին, ովքեր բոլորն էլ հարգված են մեծամասնության կողմից, որ սատարեն իրենց չար ստերին:
Զգուշացեք: Մի ընդունեք ստեր: Մի ընդգրկվեք Իմ Սուրբ Անունը պղծելու պլանի մեջ:
Ձեր Հիսուս
Թագավոր և Փրկիչ ողջ մարդկության

Հեթանոսությունը կպարտադրվի Աստծո բոլոր եկեղեցիներին

Չորեքշաբթի, 10 հոկտեմբերի, 2012թ., երեկոյան ժ 09:50

Իմ սիրելի աղջիկ, ասա աշխարհին, որ նրանք պետք է արթնանան իրենց նիրհից: Այլապես նրանք չեն կարողանա տեսնել թե ինչպես են այն չար պլանները, որոնց մասին Ես կանխասացել էի որոշ ժամանակ առաջ, կատարվում:
Ես խոսում եմ գլոբալ գերշխանության մասին, որը իրագործվում է՝ ոչնչացնելու համար քրիստոնեությունը:
Իմ եկեղեցին քանդվում է աղյուս առ աղյուս: Իմ սրբազան սպասավորները դիտավորվյալ կերպով մի կողմ են հրվում՝ իրենց կարողությունների սահմանից այն կողմ:
Իմ եկեղեցին նույնպես պղծվում է նրանց կողմից, ովքեր կատարում են երկրպագություն գազանին:
Այդ կեղծ ինքնակոչները քրիստոնյաներ չեն: Նրանք զբաղվում են օկուլտով և ներթափանցում են բոլոր կազմակերպությունների մեջ, ներառյալ տարբեր եկեղեցիների ու կրոնների մեջ: Նրանց թիրախը հատկապես կաթոլիկ եկեղեցին է: Սա այն եկեղեցին է, որը նրանք ատում են ամենից շատ: Նրանց ստերը նշանակում են, որ կաթոլիկները ստիպված են ոտքի կանգնել և պաշտպանել իրենց եկեղեցին: Նրանց ստերը չափազանց դժվարացրել են բոլոր քրիստոնյա եկեղեցիների համար պաշտպանելու Սուրբ Խորհուրդներն այնպես, ինչպես թելադրված է Աստծո կողմից: Հեթանոսությունը կպարտադրվի Աստծո բոլոր եկեղեցիներին, և վայ այն մարդուն ով կկանգնի՝ պաշտպանելու համար Աստծո Ճշմարտությունը:
Եկել է ժամանակը մարդկության բաժանման համար: Ես կգամ և կբաժանեմ երկիրը:
Նրանք, ովքեր հավատարիմ են Իմ Ուսուցումներին, կբերվեն Իմ Գիրկը: Նրանք, ովքեր կարհամարհեն Աստծուն և կհայհոյենՃշմարտության դեմ, մի կողմ կնետվեն: Մարտն արդեն սկսվել է: Փաստն արդեն ներկայացվում է:
Դեռևս ժամանակ կա ընտրելու սատանայական խմբի ստերը, ովքեր գալիս են գառների պես հագնված, կամ Ճշմարտությունը, որը ձեզ կասեն թե սուտ է:
Դուք պետք է զգոն լինեք միշտ: Բաց պահեք ձեր աչքերը: Շրջեք ձեր մեջքը, երբ կհայհոյեն Իմ Անվան, Իմ Մարմնի, Իմ խոսքի դեմ:
Ձեր Հիսուս

Ձեզնից շատերը կմերժեն Ինձ՝ ընդունելով այդ չար օրենքները

Հինգշաբթի, 11 հոկտեմբերի, 2012թ., առավոտյան ժ 10:03

Իմ սիրելի աղջիկ, դժվարությունները, որոնք կանգնած են Իմ աշակերտների առջև այս ժամանակ, կրկնակի են:
Առաջինը, նրանք ստիպված կլինեն ականատես լինել ստերին, որոնք կցուցադրվեն իրենց առջև աշխարհիկ կառավարությունների կողմից, որոնք պարտադրված են: Այդ ստերը, նոր առաջարկվող օրենքների տեսքով, նոր գաղափարների ու նոր կանոնների տեսքով, միայն մեկ բան են անում: Նրանք խախտում են Աստծո Օրենքները: Դրանք հանդուրժողականության օրենքներ են, որոնք ազատորեն թույլ են տալիս մեղքի գործողություններն ամրագրել ձեր սահմանադրությունների և եկեղեցիների մեջ:

Երկրորդ տառապանքը կլինի այն հալածանքների հետևանքով, որոնք կդրվեն ձեզ վրա Ճշմարտությունը՝ Աստծո Խոսքը խոսելու համար: Համարձակվիր խոսել Ճշմարտությունը, աղջիկս, և դու խիստ մարտահրավերի կենթարկվես: Այնուհետև քեզ կմեղադրեն ոչ քրիստոնյա լինելու մեջ և հանդուրժողականություն չունենալու մեջ:
Տեսնու՞մ ես, թե ինչպես է Սատանան աշխատում: Նա խաբում է այդ թույլ հոգիներին՝ հավատալու համար ստերի և ընդունելու մեղքը, չեղյալ հայտարարելով այն, ասես թե մեղքն ընդհանրապես գոյություն չունի:
Այդ մարդիկ, մեջք մեջքի տված, բոլոր ազգերով մեկ, ավելացնում են ճնշումը որպեսզի ոչնչացնեն Իմ քրիստոնեա եկեղեցիները և մեղքը դարձնեն ընդունելի: Նրանք նպատակ ունեն լռեցնել Իմ հետևորդներին և Իմ Սուրբ Խոսքի Ճշմարտությունը բացահայտորեն հայտարարելու նրանց կարողությունը:
Դուք կտառապեք այդ պղծությունների պատճառով: Երբ տառապեք, իմացեք, որ Ես Ինձ սերտորեն միավորել եմ ձեր սրտերին:
Խնդրում եմ, ուժեղ եղեք, հանուն Ինձ: Դուք պետք է աղոթեք այդ խեղճ մոլորված հոգիների համար, քանի որ նրանք զոհեր են մի չար խաղի մեջ՝ նյութված նրանց կողմից, ովքեր պատվում են Սատանային:
Չխաբվեք, քանի որ ճիշտ ինչպես մտածում եք, թե նրանց չարությունը՝ քողարկված որպես այլոց նկատմամբ հանդուրժողականություն և սեր, համակել է մարդկությանը, մարտը կսաստկանա:
Իմ Հոր Ձեռքը կհարվածի այնպիսի ուժով, որ նրանք՝ հանցագործները, կքշվեն: Դուք երբեք չպետք է հուսահատվեք և մտածեք, թե այդ խումբը կհաղթի Իմ աշակերտներին: Նրանք երբեք չեն կարողանա անել դա, չնայած երբեմն կարող է այդպես թվալ:
Արթնացեք, Իմ սրբազան սպասավորներ: Դուք չպետք է թույլ տաք, որ ձեզ հիմարացնեն կան ներքաշեն այդ խորամանկ պլանի մեջ, որը նախագծված է պղծելու համար Աստծո Խոսքը:
Դուք պետք է պահեք Իմ՝ ձեր Փրկչի Ուսուցումները և երբեք չժխտեք Ինձ: Սակայն դուք կգայթակղվեք այդպես անելու: Ձեզնից շատերը կմերժեն Ինձ՝ ընդունելով այդ նոր չար օրենքները:
Եթե ընդունեք, Ես կսկպասեմ, որովհետև եթե դուք կանչեք Ինձ, Ես ձեզ վեր կպահեմ: Իմ Աստվածային միջամտությամբ Ես ձեզ կպահեմ:
Խնդրում եմ ասեք այս աղերս աղոթքը (3) Պաշտպանել Աստծո Խոսքը
<<Ով սիրելի Հիսուս, պաշտպանիր մեզ ստերից, որոնք վիրավորում են Աստծուն:
Պաշտպանիր մեզ սատանայից և նրա բանակից:
Օգնիր մեզ Քեզ ավելի շատ սիրել:
Պահիր մեզ մեր մարտի մեջ:
Պաշտպանիր մեզ մեր հավատի մեջ:
Տար մեզ դեպի ապահովության Քո ապաստանը:
Օգնիր մեզ ոտքի կանգնել և պաշտպանել Քո Սուրբ Կամքը:
Ուժեղացրու մեր որոշումը լինելու Քո ճշմարիտ աշակերտները:

Տուր մեզ քաջություն:
Տուր մեզ վստահություն:
Ուղղություն տուր մեզ Ճշմարտության Ճանապարհին:
Պաշտպանիր մեզ թշնամուց:
Հեղիր մեզ վրա Քո Պաշտպանության Շնորհները:
Օգնիր մեզ խուսափել գայթակղությունից:
Մեզ ավելի մոտեցրու Քո Սուրբ Սրտին:
Օգնիր մեզ միշտ մնալ Քեզ հավատարիմ: Ամեն>>:
Գնացեք, Իմ բանակ, հանդարտությամբ և խաղաղությամբ, իմանալով որ Ես մոտ եմ ձեր սրտերին այս սարսափեցնող ժամանակներում: Երբ միայնակ եք, կորած կամ լքված եք զգում, իմացեք սա: Այդ ժամանակ է, որ Ես ամենամոտիկն եմ ձեզ: Այդ ժամանակ է, որ ձեր թուլությունը կդառնա մեծ ուժ, ճիշտ ինչպես ձեր թշնամու կարծեցյալ ուժը ոչինչ կդառնա:
Ձեր Հիսուս

12 ազգերի նոր դրախտում կլինեն տարբեր մակարդակներ

Ուրբաթ, 12 հոկտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 11:15

Իմ սիրելի աղջիկ, Իմ Սերն այնքան զորեղ է, որ այն հիմա զգացվում է նրանց կողմից ովքեր չեն ճանաչում Աստծուն:
Չնայած աշխարհում ներկա չարիքին, մարդիկ հիմա իրենց սրտերում այնպիսի սեր են զգում այլոց հանդեպ, որը դեմ է հոգիներում եղած կոռուպցիային, և որը կզարմացնի իրենց:
Այդ սերն այնքան անսպասելիորեն կներխուրժի նրանց հոգիների մեջ, որ շատերին կհասցնի արցունք թափելու: Սիրո այդ արցունքները, այնքան մաքուր՝ նրանց սրտերում, նրանց երկու մասի կբաժանեն: Նրանք չեն հասկանա, թե ինչու են այդպես զգում իրենց եղբայրների և քույրերի հանդեպ: Նրանք նաև զգգան այդ իրական և եզակի սերն իրենց Արարչի՝ Հայր Աստծո հանդեպ: Սակայն նրանք չեն ընդունի, որ Նա գոյություն ունի: Դրա փոխարեն շատերը կտարակուսեն և իրենք իրենց հարց կտան:
Այդ ի՞նչ անհասկանալի, բայց զորեղ սեր է, որ ես զգում եմ իմ սրտում: Ինչպե՞ս կարող է դա լինել, եթե Աստված չկա: Ինչպե՞ս կարող եմ ես զգալ այդ սերը, երբ ես սոսկ էվոլյուցիայի արդյունք եմ, երկրից պատրաստված մասնիկների արդյունք:
Ճշմարտությունը, զավակներս, սա է: Դուք երկրի մասնիկ չեք, ժամանակի մնացորդ չեք: Դուք կենդանի էակ եք, կենդանի հոգի, ով անվերջ հավիտենական կյանքի կարողություն ունի:
Դուք տառապում եք Ադամի և Եվայի՝ ձեր բնօրինակ ծնողների մեղքերի պատճառով: Դուք կարող եք ժպտալ, ծաղրել կամ զվարճանալ նրանով, ինչը ձեր հավատացմամբ

հնարովի պատմություն է, բայց Ճշմարտությունն այն է, որ դուք ապրում եք անկատար կյանքով: Տառապանքի այս կյանքը ձեր բնօրինակ ծնողների մեղքերի պատճառով է: Վարակված նրանց մեղքով, դուք կուրացել եք Աստծո Ճշմարտության հանդեպ նույն օձի կողմից, ով խաբեց նրանց:
Դուք հավատացած եք, թե ապրում եք իրական աշխարհում, նյութի աշխարհում, որն ունի սահմանափակ կարողություն: Երկրի վրա ձեր կյանքը կարճ է: Ձեր մարմինները ծերանում են: Ձեր առողջությունը քայքայվում է: Ժամանակի ընթացքում ձեր մարմինը մահանում է: Մերժեք ձեր ոգին, ձեր հոգին, և դուք ոչինչ եք:
Ընդունեք, որ դուք Աստծո զավակ եք, և ձեր կյանքը երկրի վրա կդառնա ավելի կարևոր, երբ ապրեք Աստծո Օրենքներին համապատասխան կյանքով: Ձեր կյանքը կերարացվի, և ձեզ կտրվի մի մեծ Ընծա՝ Հավիտենական Կյանքը:
Եթե ձեզ ցույց տրվեր այդ կյանքից գեթ մի պատառիկ, թեկուզ մեկ ժամ, դուք երբեք չէիք վիրավորի Իմ Հորը: Դուք պետք է իմանաք, որ ստանալու եք այդ Ընծաները: Դուք կապրեք ձեր ողջ ընտանիքի հետ, նրանց հետ, ովքեր մահացել են շնորհի վիճակում, և նրանց հետ, ովքեր կկազմեն երկրի վրա Իմ մնացորդ բանակը:
Ձեր մարմինը կմաքրագործվի և կվերաստեղծվի մի կատարյալ վիճակի, այն տարիքի հիման վրա, երբ ընդունել եք Աստծո Սերը:
Դուք կապրեք սիրո և խաղաղության մեջ ձեր սիրելիների և հարևանների հետ: Ձեզնից ոչ մեկը ոչ մի բանի կարիք չի ունենա:
12 ազգերի նոր դրախտում կլինեն տարբեր մակարդակներ: Ստորին աստիճանի վրա կլինեն քաղաքներ և գյուղեր, որոնք բոլորը կաշխատեն խաղաղության, սիրո, երջանկության և գոհունակության կամեցողության մեջ: Ոչ մեկը ոչ մի բանի կարիք չի ունենա: Ես կլինեմ Թագավորը, Տերը, և Ես կթագավորեմ նրանց մեջ՝ Միստիկ Միության մեջ:
Կլինեն նաև ավելի բարձր մակարդակները: Նրանք բոլոր ազգերին միասին կպահեն, Իմ Ուսուցումների հետ միության մեջ, և բոլոր մարդիկ կխառնվեն միմյանց հետ, և երկրի գազանների հետ՝ մեծ և փոքր, կատարյալ ներդաշնակությամբ:
Բոլորը կգոյատևեն՝ ուտելով Կյանքի Ծառից: Ոչ մեկը սնուցման պակաս չի ունենա:
Կլինեն նաև ազգերի կառավարությունները: Նրանք կապահովեն, որպեսզի ամեն ինչ լինի Իմ Ուսուցումներին համապատասխան: Իմ կառավարությունները կղեկավարվեն Իմ սրբերի և առաքյալների կոմից:
Սա կշարունակվի մինչև ամենավերջը, երբ տեղի կունենա մեռածների երկրորդ հարությունը՝ վերջանական առերեսման համար:
Սատնան կարձակվի դևերի հետ միասին մի կարճ ժամանակվա համար: Հետո ողջ չարիքը կոչնչացվի: Իմ Գթասրտությունը, վերջանականապես կներկայացվի աշխարհին Նոր Երկնքի և Նոր Երկրի հետ համատեղված:
Հետո ամեն ինչ կբացահայտվի, քանի որ Աստծո առեղծվածը ցույց կտրվի բոլորին իր ամբողջական և վերջնական Փառքի մեջ:
Ձեր Հիսուս

Կլինի գլոբալ վակցինացիայի ներմուծում, որը կսպանի ձեզ եթե այն ընդունեք

Շաբաթ, 13 հոկտեմբերի, 2012թ, ցերեկվա ժ 04:10

Իմ սիրելի աղջիկ, Ֆաթիմայում կանխասացված մարգարեությունները հիմա սկսում են ի ցույց գալ աշխարհում:
Մեկ համաշխարհային կառավարությունները, ստեղծված այն ազգերի մեջ, ովքեր առանց հոգնելու աշխատում են միասին, արդեն համարյա ավարտել են իրենց աշխատանքը, որը շուտով կներկայացվի աշխարհին:
Նրա կազմում կլինի նոր մեկ համաշխարհային կրոնը, որը պղծություն կլինի Իմ Հոր Աչքում:
Իմ եկեղեցի են ներխուժել նրա թշնամիները, ովքեր գայլեր են ոչխարի հագուստով: Նրանք խաբում են բոլորին, ում հետ շփման մեջ են մտնում:
Հետո կլինի գլոբալ վակցիանացիայի ներմուծում, որը կսպանի ձեզ եթե այն ընդունեք:
Սա մի ժամանակ է, երբ միայն աղոթքը, և շատ աղոթքը, կարող է մեղմացնել այդ սարսափելի չարության ազդեցությունը, որը ստեղծվել է իշխանության գլուխ կանգնած մարդկանց մի էլիտար խմբի կողմից:
Նրանք աշխատում են ձեր կառավարությունների յուրաքանչյուր մասում, և նրանք, ովքեր աշխատում են նրանց հետ կողք-կողքի ամեն օր, գիտեն թե նրանք ինչ են անում:
Այնքան խորամանկ են նրանք, որ կներկայացնեն յուրաքանչյուր չար արարք որպես մի մեծ գործ, մի մեծ ծառայություն մարդկությանը: Նրանք կանեն իրենց կարողացած ամեն ինչ՝ պղծելու համար այն ամենն, ինչ կապված է Աստծո հետ:
Նրանք կքարոզեն և կտարածեն հեթանոսություն: Աստծո զավակները, ովքեր կընդունեն նրանց օրենքներն ու ուսուցումները, կվարակվեն նրանց չար ուղիներով:
Դուք պետք է աղոթեք պաշտպանության համար, բայց ամենից առավել պետք է աղոթեք այդ հոգիների համար: Քանի որ Իմ Հայրը մտադիր է պատժել նրանց: Նա կառանձնացնի նրանցից յուրաքանչյուրին և ամեն մեկին, որ ոչնչացնի նրանց: Առանց ձեր աղոթքների նրանք կկորչեն և կնետվեն կրակի լճի մեջ:
Ձեր Հիսուս

Նրանք, ովքեր սառնասիրտ սպանություն են կատարում, կարող են փրկվել ձեր աղոթքների միջոցով

Կիրակի, 14 հոկտեմբերի, 2012թ, ցերեկվա ժ 06:10

Իմ սիրելի աղջիկ, երբեք չհավատաս, ոչ մի պահ, որ նրանք, ովքեր սարսափելի մեղքեր են գործում, և որոնց չար արարքներն աշխարհում վայրագությունների պատճառ են դառնում, չեն կարող փրկվել:
Նրանք, ովքեր սառնասիրտ սպանություն են կատարում, մահվան են դատապարտում իրենց սեփական համերկրացիներին կամ սպանում իրենց սեփական երեխաներին, որ դեռևս արգանդի մեջ են, կարող են փրկվել ձեր աղոթքների միջոցով:
Շատ այդպիսի հոգիներ ազատագրում չեն փնտրի Իմ Աչքում, քանի որ ոչ մի սխալ բան չեն տեսնում իրենց արածի մեջ: Նրանց փրկության հույսը ձեր աղոթքներն են:
Սրանք այն հոգիներն են, որոնց Ես ամենաշատն եմ ձգտում:
Այդ կորած հոգիներն այնքան հեռացված են Ինձնից, որ միայն զոհաբերվող հոգիների տառապանքով և Իմ աշակերտների աղոթքներով կարող են նրանք փրկվել:

Նույնիսկ նրանք, ովքեր գիտակցաբար պաշտում են Սատանային և գիտեն որ նա գյություն ունի, բայց շարունակում են ծաղրել Ինձ, նույնպես կարող են փրկվել հավիտենական դատապարտությունից:
Ես ձեզ բոլորիդ կոչ եմ անում կանչել Ինձ, այս Խաչակրաց աղոթքի միջոցով՝ ազատագրում փնտրելու մահացու մեղքի մեջ գտնվող այն հոգիների համար, ովքեր մարդասպանություն են կատարում:
Խաչակրաղ աղոթք (80) նրանց հոգիների համար, ովքեր մարդասպանություն են գործում

<<Ոհ սիրելի Հիսուս, ես Գթասրտություն են աղերսում նրանց համար, ովքեր մարդասպանություն են գործում:

Ես կոչ եմ անում անհիշաչարության՝ մահացու մեղքի մեջ գտնվողների հանդեպ: Ես առաջարկում եմ իմ սեփական տառապանքներն ու դժվարությունները Քեզ, որպեսզի կարողանաս բացել Քո Սիրտը և ներել նրանց իրենց մեղքերը:

Ես խնդրում եմ, որ Դու Քո Թանկագին Արյամբ ծածկես բոլոր նրանց, ովքեր չար մտադրություններ ունեն իրենց հոգիների մեջ, որպեսզի նրանք կարողանան մաքրվել իրենց անօրենություններից: Ամեն>>:
Հիշեք, որ չնայած նրանց մեղքերը կարող են հիվանդացնել ձեզ, Իմ հետևորդներ, այդ հոգիները ձեր օգնության կարիքն ունեն:
Նրանք վարակվել են չարի կողմից և նրանցից շատերը չգիտեն լավի ու վատի միջև եղած տարբերությունը:
Սրանք այն հոգիներն են, որոնք ամենամեծ տառապանքն ու ցավն են Ինձ պատճառում: Իմ տառապանքը երկարում է, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը կարողանա ազատագրվել:
Գնացեք Իմ աշակերտներ և թույլ տվեք որ Իմ Սերն ու խոնարհությունը ողողեն ձեր սրտերը, որպեսզի կարողանաք տառապանքի ձեր առատաձեռնությամբ օգնել փրկելու Աստծո այդ խեղճ կորած զավակներին:
Ձեր Հիսուս

Նրանք, ովքեր կգոյատևեն վերջին ժամանակներում , չեն մահանա ֆիզիկական մահով

Երեքշաբթի, 16 հոկտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 11:30

Իմ սիրելի աղջիկ, մեռածներից հարություն առնելու գաղտնիքը կանոր է հասկանալ: Երբ Ես մեռա որպես մարդ մարմնի մեջ, Ես ոչնչացրեցի ձեր մահկանացիությունը: Իմ մահը ոչ միայն ազատեց ձեզ մահից, այլև՝ մեղքից մահից հետո: Խաչի վրա Իմ Մահը տվեց ձեզ անմահականության ընծան Իմ Նոր Թագավորության մեջ:
Որովհետև Ես մեռա որպես մարդ, Ես մեռա մահկանացու մահով: Երբ մարդ մեռնում է, նա դառնում է անմահ, եթե շնորհի վիճակի մեջ է:
Երբ Ես հարություն առա մեռածներից, Ես տվեցի այդ Ընծան նրանց, ովքեր հիմա Երկնքում են, ովքեր մահացել են շնորհի վիճակում: **Իմ Նոր Դրախտում նրանք կդառնան կատարյալ անմահ մարմիններ: Երկրի վրա գտնվողները կդառնան անմահ**

Երկրորդ Գալուստի ժամանակ, մի ակնթարթում:
Երբ Իմ պատգամատարի փողը հնչի, մեռածները կբարձրանան, ինչպես նաև նրանք, ում անունները Ապրողների Գրքի մեջ են, վայելելու Հավիտենական Կյանքը Իմ Նոր Թագավորության 1.000 տարիների ընթացքում, որը խոստացվել է Ինձ Իմ Հոր կողմից:
Այն կոչվում է Նոր Դրախտ, և այն ամենն ինչ մահկանացու է այլևս չի լինի մինչև վերջը:
Դուք կմիավորվեք Ինձ հետ՝ ձեր Հիսուսի հետ:
Մահն այլևս նշանակություն չի ունենա, քանի որ այն չի լինի:
Հիմա, երբ Ես բերում եմ ձեզ Իմ վերջնական փրկության Ընծան, դուք պետք է լսեք Ինձ:
Ուշ դարձրեք և խրախուսեք նրանց, ովքեր այսօր, ճիշտ ինչպես Նոյի օրերի ժամանակ, զբաղված են իրենց զվարճություններով լի ու զվարճությունների ձգտող կյանքով, որ իրենց կողմից հիմարություն կլինի անտեսել նշանները: Ճիշտ ինչպես Նոյի օրերին քշվեցին, երբ ջրհեղեղը եկավ: Թույլ մի տվեք դա տեղի ունենա այս անգամ:
իմ հետևորդներին տրվել են հուսահատ նախազգուշացումներ, բայց՝ անօգուտ:
Խնդիրն այն է, որ նրանք, ովքեր ընդունում են Ճշմարտությունը, խառնվում են նրանց հետ, ովքեր չեն ընդունում Ճշմարտությունը, և դա ազդում է նրանց վրա:
Դուք պետք է հեռու մնաք նրանցից, ովքեր հեթանոս են, և աղոթեք նրանց համար: Եթե հեռու չմնաք, ձեզ կգայթակղեցնեն ստերով և անմաքուր ոգիներով:
Նրանք, ովքեր կդիմադրեն Ինձ, հեռու կձգվեն Իմ պաշտպանությունից: Նրանք շուտով կգտնեն, որ իրենց քայքայված կյանքը իշխանություն է վերցնում իրենց վրա, սկզբում դանդաղորեն: Այդ ժամանակ նրանք կարգելափակեն Ինձ և կդառնան ստերի ստրուկ: Երբ դուք մնաք նրանց ընկերակցության մեջ, դուք նույնպես հարձակման կենթարկվեք:
Հետո դուք կտեսնեք, որ ներողություն եք խնդրում Ճշմարտությունը՝ Աստծո Խոսքը խոսելու համար: Այդ էտապում է, որ պարզորոշ կտեսնեք բաժանումը ձեր աշխարհում: Ընծան, որը կստանաք Սուրբ Հոգուց, կնշանակի, որ դուք վայրկենապես կճանաչեք այն վտանգը, որի մեջ նրանք գտնվում են:
Եթե միայն նրանք իմանային Ճշմարտությունը, նրանք կվազեին ձեզ մոտ: Բոլոր այն կեղծ աստվածների համար, որ նրանք կռապաշտում են, նրանք կատարում են նույն դասական սխալը: Նրանք պաշտում են նյութական իրերի հրաշքը, բայց անտեսում են դրանց Արարչին:
Խաղաղության Նոր Դարաշրջանում նրանք կունենան այնքան շատ կատարելություն: Չնայած դրան, նրանք շրջում են իրենց մեջքը:
Ես միշտ կսիրեմ նրանց, բայց Իմ հանդեպ նրանց ունեցած սիրո պակասը նշանակում է, որ նրանք չեն մտնի նոր կյանքը, որը Ես ստեղծել եմ նրանց համար:
Այս նոր կյանքը ստեղծվել և հնարավոր է դարձել երկու պատճառով:
Երբ Ես մեռա մարմնով, Ես ոչնչացրեցի մահը: Երբ Ես բարձրացա մեռածներից, Ես ձեզ տվեցի Հավիտենական Կյանք, երբ մարմինն այլևս զորություն չունի ձեզ վրա:
Սա է Իմ Խոստումը Աստծո բոլոր զավակներին: Նրանք, ովքեր կգոյատևեն վերջին ժամանակներում, չեն մահանա ֆիզիկական մահով: Նրանք օրհնյալ են: Նրանք կփոխվեն, վայրկենապես, կատարյալ ֆիզիկական մարմինների, Իմ Փառահեղ Մարմնի հետ միստիկ միության մեջ:
Այդ ժամանակ է, որ նրանք կհանդիպեն նրանց, ովքեր մահացել են հօգուտ Ինձ,

ովքեր կբարձրացվեն մեռածներից: Նրանք բոլորը կապրեն Իմ Նոր Դրախտում:
Ձեր Հիսուս

Դժվար և միայնակ ժամանակ է բազմաթիվ տեսանողների և մարգարեների համար, որովհետև /նրանցից/ յուրաքանչյուրն աշխատում է միայնակ

Երեքշաբթի, 16 հոկտեմբերի, 2012թ, ցերեկվա ժ 04:20

Իմ սիրելի աղջիկ, երբ Ես ասում եմ որ ուղարկել եմ Իմ մարգարեներին աշխարհ, դա նշանակում է, որ յուրաքանչյուրին տրվել է մի յուրահատուկ առաքելություն: Ոչ մի երկու առաքելություն չեն հատում իրար:
Դու, աղջիկս, ինչպես Ես ասել եմ քեզ, վերջին մարգարեն ես: Ով էլ որ առաջ գա հիմա և հայտարարի թե հռչակում է Իմ Խոսքը, այն ժամանակից ի վեր ինչ դու ստանում ես քեզ տրվող պատգամները, նրան այդ իրավասությունը չի տրվել Իմ կողմից:
Շատ խեղճ հոգիներ են որոշել ուշադրություն փնտրել, իսկ որոշ դեպքերում՝ վատաբանել աշխարհին տրվող այս Սուրբ Պատգամները, որոնք Իմ հոգիներին փրկելու համար են տրվում:
Ես գալիս եմ աղերսելու Աստծո զավակներին, որ լսեն, թե Ես ինչ ունեմ ասելու, բայց Ես չեմ կարող նրանց ստիպել, որ լսեն Ինձ:
Ես երբեք չեմ կարող հրամայել Աստծո զավակներին որևէ բան անել, քանի որ դա անհնար է, քանի որ նրանց տրվել է ազատ կամքի Ընծան:
Ես միայն խնդրում եմ, որ բացեք ձեր սրտերը և թույլ տաք, որ Իմ Սերը լցնի ձեր հոգիները: Ես ցանկանում եմ որ դուք բոլորդ, ներառյալ նրանք ովքեր չար գործողություններ են կատարում, իմանաք որ Ես սիրում եմ ձեզ: Որպես այդպիսին, ձեր փրկությունն առաջնահերթ է Ինձ համար: Ամեն դեպքում, Հայտնության գրքում կանխասացված մարգարեությունները սկսվել են:
Նրանք, ովքեր լսում են Իմ ցուցումները և պատասխանում Իմ կանչին, կարող են փրկել շատ հոգիների:
Իմ ցանկությունն է, որ ձեզանից յուրաքանչյուրը գա Ինձ մոտ և կիսի Նոր Դրախտի Թագավորությունը:
Ես չեմ արհամարհում կարծրացած մեղավորներին, ոչ էլ ձեզ խնդրում եմ արհամարհել նրանց, քանի որ դա ձեր իրավունքը չէ: Եթե և երբ դուք արհամարհեք մեկ ուրիշի, դուք չեք խոսի Աստծո Անունով: Եթե խրախուսեք ուրիշներին որ դատեն այլոց, արհամարհելով նրանց, դուք մերժում եք Ինձ՝ ձեր Հիսուսին:
Ես ձեզ կոչ եմ անում լսել միայն մեկ ձայնի հիմա: Իմ Ձայնն այն ամենն է, ինչի վրա դուք պետք է բևեռեք ձեր ուշադրությունը, եթե ցանկանում եք փրկել ինքներդ ձեզ, ձեր ընտանիքներին, ընկերներին և հարևաններին: Հիմա փնտրվում են բոլոր աղոթքները՝ օգնելու համար ձեզ և ձեր սիրելիներին, որ նախապատրաստվեք Իմ Խոստովանության՝ Նախազգուշացման համար:
Ժամանակը մոտ է հիմա:
Ձեր Հիսուս

Փոփոխության ալիքը շուտով կսկսվի

Չորեքշաբթի, 17 հոկտեմբերի, 2012թ, ցերեկվա ժամը 12:30

Իմ սիրելի աղջիկ, փոփոխության ալիքը կսկսվի շատ շուտով:
Այնքան շատերն աշխարհում կհասկանան վերջապես իրենց կյանքի իմաստը և թե ինչն է կարևոր, և ինչը՝ ոչ:
Առջևում սպասվող այդ ժամանակը պետք է օգտագործել որպես նախապատրաստության ժամանակահատված երկրի վրա Նոր Դրախտի համար:
Դրանից չպետք է վախենալ:
Նրանք, ովքեր ճանաչում են Ինձ, Ես ասել եմ ձեզ, որ դուք պետք է վստահեք Ինձ ամբողջությամբ: Նրանք, ովքեր չեն ճանաչում Ինձ, Ճշմարտությունը կբացահայտվի նրանց առաջին անգամ:
Իմ աշակերտները հիմա պետք է ասեն խաչակրաց աղոթքները, ներառյալ (43)-րդը՝ Նախազգուշացման ընթացքում հոգիներ փրկելու համար, որպեսզի երկրի նորացումը լինի Իմ Ամենասուրբ Կամքի համաձայն:
Հենց որ Ճշմարտությունը բացահայտվի, Իմ Սուրբ Պատգամները պետք է տարածվեն ամենուրեք: Երբ դա տեղի ունենա, շատերը զգոն կդառնան այն խաբեությունների հանդեպ, որոնց ստիպված կլինեն դիմակայել իրենց երկրներում: Նրանք կիմանան թե ինչպես ճանաչել հակաքրիստոսին և կկարողանան զինվել նրա /պատճառած/ տանջանքի դեմ:
Ձեզ Իմ Սուրբ Սրտին միավորելու ժամանակը հիմա է:
Երբ դուք Ինձ հետ միության մեջ եք, դուք պաշտպանված կլինեք միշտ:
Ձեր Հիսուս

Հայր Աստված. Շուտով Իմ Որդին կուղարկվի՝ բացահայտելու համար մարդկության Արարման Ճշմարտությունը

Հինգշաբթի, 18 հոկտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 06:00

Իմ սիրելի աղջիկ, ժամանակը, որ Ես ուղարկեմ Իմ միակ Որդի Հիսուս Քրիստոսին՝ Իմ բոլոր զավակներին Իմ Սրտի մեջ հավաքելու համար, մոտ է:
Իմ Սիրտը՝ բոլոր Կյանքի աղբյուրը, կբացվի՝ հավաքելու համար Իմ բոլոր զավակներին որպես մեկ:
Իմ Խոստումը՝ փրկել Իմ բոլոր փոքրիկներին, գրեթե ավարտված է:
Իմ ամենամեծ ցանկությունն է բացահայտել Ինքս Ինձ յուրաքանչյուր անձնավորության, ներառյալ նրանց, ովքեր չեն հասկանում թե ինչու և ինչպես են իրենք ստեղծվել Իմ Ձեռքով:
Շուտով Իմ Որդին կուղարկվի՝ բացահայտելու համար մարդկության Արարման Ճշմարտությունը:
Այդ օրը նախապատրաստվել է այնքան շատ տասնամյակներ: Այն չէր կարող տեղի ունենալ մինչ այժմ, քանի որ Իմ այդքան շատ զավակների կորուստը չափազանց շատ կլիներ:
Շուտով Իմ զավակներին ցույց կտրվի իրենց արարման Ճշմարատությունը, նրանց գոյությունը , և նրանց հոգիների անմահությունը:
Մինչ այս իրադարձությունը շատ հոգիների մեջ կստեղծի մեծ հույս և ուրախություն,

ուրիշների համար դա կլինի մի տառապանք, որը նրանք չեն կարողանա կրել:
Սիրո և Գթասրտության Իմ Աղբյուրը ցողվելու է ողջ մարդկության վրա Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:
Դրանից հետո կգա մեծ բաժանումը, երբ հոգիները, որոնք կպատասխանեն Նրա Գթասրտությանը, մի կողմ կտարվեն:
Մնացած հոգիներին կտրվի ամեն հնարավորություն լսելու համար Իմ Կանչը Երկնքից:
Ես՝ նրանց Հայրը, Ինքս Ինձ հայտնի կդարձնեմ կլիմաների զորության միջոցով: Իմ Ձեռքին ականատես կլինեն, մինչ Ես կհասնեմ Իմ զավակներից յուրաքանչյուրին՝ նրանց մահից փրկելու համար:
Իմ Կանչը կլսվի, բայց ոչ բոլորի կողմից: Այդ հոգիներին ցույց կտրվի Իմ Սերը, Իմ մարգարեների միջոցով, մի վերջին ջանքով՝ նրանց Իմ Սրտի մեջ բերելու համար:
Երկինքը կբացվի և ետ կքաշվի: Ինչպես մագաղաթ այն կոլորվի, մինչև Երկնքի նշանները բացահայտվեն: Իմ Հրեշտակների ձայները կհրապուրեն Իմ այդ խեղճ փոքրիկ հոգիներին մինչև ամենավերջը:
Ես հիմա խոստանում եմ որ Իմ Սիրո Աղբյուրը կծածկի ողջ աշխարհը, մինչ Ես կմիավորեմ Իմ Սիրտը Իմ բոլոր զավակների սրտերի հետ:
Իմ Աստվածային Միջամտությանն ականատես կլինեն միլիարդավորները, և շատերը կվազեն Իմ Սրբազան Բազուկների մեջ թեթևացած: Իմ Աստվածային Պլանի Ճշմարտությունը և երկրի վրա կյանքի առեղծվածը բաց կդրվեն, որ բոլորը տեսնեն:
Միայն այդ ժամանակ մարդը կտեսնի Հավիտենական Կյանքի գոյության Ճշմարտությունը:
Երկրի վրա տառապանքի վերջը մոտ է: Վերջնական հալածանքը, ուր չարը թագավորում է Իմ զավակների վրա, ավարտված է:

Հետո, այն ազատությունը, որը Ես ամենասկզբից ի վեր տենչացել եմ Իմ զավակների համար, վերջապես կլինի նրանցը:
Ինձ նայեք զավակներս, ձեր սիրող Հորը, քանի որ Ես պահում եմ ձեզ Իմ Ձեռքերի մեջ:
Ես գալիս եմ, Իմ Որդու միջոցով, տանելու ձեզ դեպի երիկրի վրա Իմ Նոր Թագավորություն:
Սա է այն ժառանգությունը, որը Ես խոստացել եմ Իմ Որդուն: Սա է Իմ խոստումը Իմ բոլոր զավակներին:
Այդ մեծ հրաշքների ժամանակը շատ է մոտենում:
Ես օրհնում եմ Իմ զավակներից յուրաքանչյուրին և ամեն մեկին:
Ես սիրում եմ ձեզ:
Ես ծածկում եմ ձեզ և միավորում ձեզ Իմ Սրտին:
Ձեր Հայր
Աստված Ամենաբարձրյալ

Կույս Մարիամ. Շնորհները, որ տրվում են, երբ ստանում եք Իմ Որդու Մարմինը

Ուրբաթ, 19 հոկտեմբերի, 2012թ, առավոտյան ժ 09:06

(Ստացվել է Օրհնյալ Կույս Մարիամի մի երևման ժամանակ, որը տևեց 20 րոպե, որի ընթացքում նրա ճակատին հայտնվել է Սուրբ Հաղորդության պատկերը)
Զավակս, նշխարը, որ տեսնում ես Իմ ճակատին մի խորհրդանիշ է, ապացուցելու համար Աստծո բոլոր զավակներին Սուրբ Հաղորդության մեջ Իմ Որդու Ճշմարիտ Ներկայությունը:
Իմ Որդին ներկա է աշխարհում և կանգնած է Աստծո յուրաքանչյուր զավակի կողքին ամեն օր, հուսալով որ նրանք կզգան Իր Ներկայությունը:
Զավակներս, միայն Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի, մարդկության Ազատարարի իսկական Մարմինը ստանալու միջոցով է, որ դուք կօրհնվեք յուրահատուկ շնորհներով:
Երբ Իմ Որդին մեռավ ձեր մեղքերի համար, որպեսզի Աստծո յուրաքանչյուր զավակ կարողանա խափանել մահը, նա /Իր/ ետևից թողեց մի կարևոր ժառանգություն:
Քրիատոսի Ներկայությունը Սուրբ Հաղորդության մեջ իրական է, և երբ այն ընդունում են, նա բերում է ձեզ հատուկ պաշտպանություն: Այն ձեզ ավելի մոտիկ է դարձնում Նրա հետ միության մեջ:
Նա Կյանքի Հացն է: Ձեզ տրված այս Ընծան, զավակներս, երբեք չպետք է հարցականի տակ դրվի կամ մերժվի:
Շնորհները, տրված նրանց ովքեր ստանում են Նրա Մարմինն ու Արյունը, ներառում են փրկությունը քավարանից, եթե ստանում են ամեն օր:
Իմ Որդին /ձեր/ մահվան ժամին կվերցնի ձեզ Իր Բազուկների մեջ քավարանի կրակներից հեռու:
Սուրբ Պատարագը, որն առաջարկում է Իմ Որդու Իրական Մարմինը ի պատիվ Իմ Հոր, իր հետ բերում է նաև մեծ առավելություններ:
Որքան շատ ամեն օր հաճախեք պատարագների և որքան շատ ստանաք Իմ Որդու Մարմինն ու Արյունը Սուրբ Հաղորդության մեջ, ձեզ կտրվի իմունիտետ քավարանի մաքրագործող կրակների հանդեպ:
Ձեզնից նրանք, ովքեր բաց են թողնում Իմ Որդու Գոյությունը Սուրբ Հաղորդության մեջ, ինքներդ ձեզ զրկում եք մի մեծ Ընծայից: Դուք չեք անտեսվի Սուրբ Պատարագի ժամանակ Նրա Մարմինը մերժելու համար, բայց դուք չեք ստանան այն շնորհները, որ Նա ցանկանում է հեղել Աստծո բոլոր զավակների վրա:
Սուրբ Հաղորդությունը, որ ստանում եք, պետք է ինչպես հարկն է նվիրաբերված լինի: Երբ ստանում եք Նրա Մարմինը, նա կլցնի ձեզ մի խորը և խոնարհ սիրով, որը կհզորացնի ձեր հավատքը և կբերի ձեզ Հավիտենական Կյանք:
Սուրբ Հաղորդությունն այն Ընծան է, որը ձեզ կշնորհի Հավիտենական Կյանք: Երբեք չմոռանաք դա:
Իմ Որդին մեծապես տառապեց, աշխարհին այդ մեծ Ընծան՝ դեպի Երկինք տանող անձնագիրը տալու համար: Մի մերժեք այն: Մի նետեք մարտահրավեր Նրա առատաձեռնությանը: Մի թերագնահատեք Սուրբ Նշխարի Զորությունը:
Խնդրում եմ ասեք Խաչակրաց աղոթք (81)- ը Սուրբ Հաղորդության Ընծայի համար
<<Ով Երկնային Նշխար, լցրու իմ մարմինն այն սնուցմամբ, որի կարիքը նա ունի:
Լցրու հոգիս Հիսուս Քրիստոսի Աստվածային Ներկայությամբ:
Տուր ինձ շնորհները՝ իրականացնելու Աստծո Սուրբ Կամքը:
Լցրու ինձ այն խաղաղությամբ և հանդարտությամբ, որ գալիս է Քո Սուրբ Ներկայությունից: Երբեք թույլ մի տուր ինձ կասկածել Քո Ներկայությանը:
Օգնիր ինձ ընդունել քեզ մարմնով և հոգով, և որ Սուրբ Հաղորդության միջոցով ինձ վրա հեղված Շնորհներն օգնեն ինձ հռչակել մեր Տեր Հիսուս Քրիստոսի Փառքը:

Մաքրագործիր իմ սիրտը: Բաց իմ հոգին և սրբագործիր ինձ, երբ ես ստանամ Սուրբ Հաղորդության մեծ Ընծան:
Տուր ինձ այն շնորհներն ու բարեհաճությունները, որոնք նա /Սուրբ Հաղորդությունը/ հեղում է Աստծո բոլոր զավակների վրա, և տուր ինձ իմունիտետ քավարանի կրակների հանդեպ: Ամեն>>:
Զավակներս, դուք պետք է աղոթեք որ բոլոր քրիստոնյաներն ընդունեն և հասկանան Սուրբ Հաղորդության զորությունը: Դա այն զենքն է, որը պահանջվում է փկելու համար Իմ բոլոր զավակների հոգիները:
Ընդունեք այն բարի շնորհով և սրտի առատաձեռնությամբ:
Ձեր Օրհնյալ Մայր
Մայի Փրկության

Հրեաների համար. Նրանք վերջապես կընդունեն, որ Ճշմարիտ Մեսիան եկել է

Շաբաթ, 20 հոկտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 10:30
Իմ սիրելի աղջիկ, Իմ Երկրորդ Գալուստը կլինի Իմ Ուխտի իրականացման վերջին գլուխը: Այդ ուխտը կտեսնի Նոր Երուսաղեմի ծնունդը:
Այդ Նոր Երուսաղեմը կնշանավորի Աստծո բոլոր զավակների միավորումը, ովքեր ընդունում են Տիրոջ Խոսքը:
Հրեաները վերջապես կընդունեն որ Ճշմարիտ Մեսիան եկել է՝ բերելու համար իրենց այն ազատությունը, որին ձգտում են:
Ես Հիսուս Քրիստոսը Դավիթի Տնից, կգամ որպես Փրկիչ, մեկ Ճշմարիտ Աստծո Սուրբ Կամքի համաձայն:
Նրանք մերժեցին Ինձ՝ Աստծո Որդուն, Ով եկավ մարմնով առաջին անգամ: Այս անգամ, Ես կգամ Երկնքից և կպարուրեմ Իմ ընտրյալ ժողովրդին Իմ Նոր Թագավորության Ընծայով:
Նրանք վերջապես կլինեն խաղաղության մեջ, քանի որ կտեսնեն Ճշմարտությունը և կընդունեն Եռանձն Աստծո Գոյությունը: Միայն մեկ Աստված կա: Դրանից ավելի չի կարող լինել: Սակայն Ես միության մեջ եմ Իմ Հոր հետ: Ես Աստված Եմ: Ես եկա մարմնով՝ ցույց տալու համար մարդկությանը Իմ Գթասրտությունը, և փրկելու նրանց դատապարտությունից: Իմ Սուրբ Հոգին նաև միության մեջ է մեկ Աստծո հետ մինչ ցուցադրվում է մարգարեների հոգիների ներսում և բոցավառում Աստծո զավակների հոգիները:
Այնքան շատերը կատաղի կերպով կմարտնչեն Իմ Երկրորդ Գալուստի դեմ, ներառյալ նրանք, ովքեր հավատում են մեկ Ճշմարիտ Աստծուն: Նրանք, ինչպես դա պատահեց անցյալում, չեն ընդունի Աստծո Խոսքը մինչ այն բացահայտվում է մարգարեների միջոցով:
Շատ բարի և նվիրված քրիստոնյաներ կշարունակեն մերժել Իմ Խոսքը ճիշտ մինչև վերջ:
Իմ Խոսքը մարտահրավերի կենթարկվի և կմասնատվի հատկապես կաթոլիկ եկեղեցու կողմից: Սակայն իմացեք սա: Իմ Երկրորդ Գալուստի ժամանակը մոտ է, և նրանք, ովքեր կշարունակեն մերժել Ինձ և խոստումը, որը Ես տվեցի Իմ Հորը՝ ստեղծելու Նրա Թագավորությունը երկրի վրա, մի կողմ կթողնվեն:

Իմ Մեծ Գթասրտության բացահայտումից հետո, և այն բանից հետո երբ, բոլոր նրանց ովքեր չեն ցանկանում ընդունել Ճշմարտությունը, կտրվի ամեն հնարավորություն, Իմ համբերությունը կսպառվի:
Ձեր Հիսուս

Արդեն դժոխքում գտնվող միալիարդավոր հոգիները նրանք են, ովքեր անամոթաբար մերժել են Ինձ իրենց կյանքի ընթացքում

Շաբաթ, 20 հոկտեմբերի, 20102թ, երեկոյան ժ 11:20

Իմ սիրելի աղջիկ, տեսիլքը, որը Ես թույլ տվեցի քեզ տեսնել անցած գիշեր քեզ հոգեպես զորացնելու համար էր, և մահից հետո կյանքի մասին Ճշմարտությունը քեզ ցույց տալու համար:
Մահից հետո առաջին ժամերի ընթացքում Սատանան ուղարկում է իր դևերին՝ հոգիներին փորձելու համար՝ նույնիսկ այդ էտապում:
Նա գայթակղեցնում էնրանց մերժել քավարանի վիճակը: Նա անում է նույն բանը նրանց հետ, ովքեր մահացել են շնորհի վիճակում, ովքեր կոչված են Երկնքի համար:
Ես քեզ ցույց տվեցի այն արագությունը, որով հոգիներն ընկնում են դժոխք, և այն սարսափեցնող հալածանքը, որին նրանք դիմակայում են, նախազգուշացնելու համար նրանց, ովքեր չեն հավատում դրա գոյությանը:
Արդեն միլիարդավոր հոգիներ են այնտեղ, և այնքան շատերն են մտնում այնտեղ ամեն վայրկյան, ասես ընկած աստղերի հեղեղ է քեզ թվում, կարկտախառն անձև, որ թափվում է կրակի լճի մեջ:
Ես քեզ ցույց տվեցի նաև այն զարմանքն ու ուրախությունն այն հոգիների դեմքերին, երբ նրանք խլվել են վերջին պահին և փրկվել: Դա զոհաբերվող հոգիների կողմից ընդունած տառապանքի շնորհիվ է՝ այդպիսի հոգիներին դժոխքից փրկելու համար:
Սկզբում դու տեսար սարսափ, իսկ հետո՝ վախ նրանց դեմքերի վրա, մինչ իրենց վերջնական հանգստի վայրի մասին Ճշմարտությունը բացվում էր նրանց վրա: Հետո քեզ ցույց տրվեց այն ուրախությունը նրանց դեմքերի վրա, երբ հասկացան որ խնայվել են:
Արդեն դժոխքում գտնվող միլիարդավոր հոգիները նրանք են, ովքեր անամոթաբար մերժել են Ինձ երկրի վրվա իրենց կյանքի ընթացքում: Շատերը խելացի, զարգացած մարդիկ էին, աշխարհում ազդեցիկ դիրքեր ունեցող, ովքեր ամեն ինչ արեցին, վստահանալու համար որ Աստծո Խոսքը չլսվի: Շատերը պատասխանատու էին հազարավոր անմեղ մարդկանց սպանել հրամամայելու մեջ: Նրանք մահվան էին դատապարտում Աստծո զավակներին առանց մեկ ունցիա գթասրտության իրենց սրտերում: Նրանք կատարում էին նողկալի գործողություններ, ներառյալ սեռական այլասրություններ, որոնք վիրավորական են Աստծո համար և բացահայտվել են Նրա կողմից:
Շատերը հալածանք են պատճառել Աստծո եկեղեցիներին աշխարհիկ գործողությունների միջոցով, և որոշ դեպքերում միացել թշնամում սև պատարագների մեջ, ուր երկրպագել են գազանին:
Սրանք այն հոգիներն են որոնց դու փրկում ես, աղջիկս՝ սևացած հոգիներ և քարե

սիրտ ունեցողներին:
Դժոխքում տաս անգամ ավելի շատ հոգիներ կան, քան քավարանում: Դժոխքում գտնվողող միլիարդավոր հոգիները, բոլորը տարբեր մակարդակներում, գերազանցում են դրախտում գտնվողներին՝ դրախտում գտնվող ամեն մի հոգու դիմաց՝ երեսուներեքը:
Հեշտ չէ դրախտ գնալ, և շատ նվիրվածություն է պահանջվում հոգին նախապատրաստելու համար, որպեսզի այն ներս մտնի դարպասներից:
Սա Ճշմարտության ժամանակն է: Ճշմարտությունը միշտ չէ, որ հաճելի է, բայց այն անհրաժեշտ է, որպեսզի Աստծո բոլոր զավակները հասկանան:
Իմ Գթասրտությունն, այնուամենայնիվ, մեծ է: Երբ խնդրեք այն ձեզ համար, ձեր աղոթքներին պատասխան կտրվի: Երբ խնդրում եք մեկ այլ հոգու փրկության համար, հատկապես նրա մահվան ժամին, ձեր կանչը կլսվի: Եթե չեք խնդրում Իմ Գթասրտությունը, այն չի կարող տրվել:
Նախազգուշացման ժամանակ Իմ Գթասրտությունը կհեղվի ողջ աշխարհի վրա: Այնուհետև դուք պետք է խնդրեք Ինձ, որ Իմ Մեծ Գթասրտությունը պաշտպանի ձեզ:
Նրանք, ովքեր կմերժեն Իմ Գթասրտությունը, կանեն դա իրենց սեփական ազատ կամքով:
Իմ Գթասրտությունն առատ է, սակայն այնքան քչերն են խնդրում այն:
Ձեր Հիսուս

Երբ փորձեն պղծությունից ստեղծել մի Խորհուրդ Իմ եկեղեցիներում, կասեն թե դա միասեռ զույգերի իրավունքների պատճառով է

Կիրակի, 21 հոկտեմբերի, 2012թ, առավոտյան ժ 10:05

Իմ սիրելի աղջիկ, դժոխք ընկղմվող հոգիների տեսիլքները, որոնք Ես թույլ տվեցի որ քեզ ցույց տրվեն, քեզ վախեցնելու համար չէր, այլ իրականությունը ցույց տալու համար: Այդ կերպ դու հիմա կհասկանաս, թե Ես ինչպես եմ տառապում ամեն օր, մինչ դիտում եմ, թե հոգիներն ինչպես են ընկղմվում դժոխքի խորքերը:
Ոհ, եթե մարդիկ միայն իմանային դժոխքի սարսափները, և թե ինչպես է գազանը խժռում այդպիսի հոգիներին, նրանք կխուսափեին մեղքից ամեն գնով:
Այդ նույն հոգիները դեռևս կարող են փրկվել, աղջիկս, Իմ Իմունիտետի շնարհի աղոթքի միջոցով: Այդպես անելով /աղոթելով/ դուք, Իմ աշակերտներ, Ինձ հանգստություն կբերեք այդ սարսափելի սիրտ կոտրող խարազանից:
Նրանք, ովքեր մեռնում են մահացու մեղքի մեջ, դատապարտված են դժոխքի կրակներին: Շատերն են կատարում այդ մեղքերը, հավատալով, որ եթե իսկապես Աստված կա, ապա Նա գթասիրտ է: Եվ այդպես, նրանք շարունակում են մեղանչել, մինչև արդարացնում են իրենց մեղքերը, այնպես, որ ի վերջո դրանք իրենց աչքում դառնան ոչ մի հետևանք չունեցող:
Նրանք կասեն, թե ընտրություն չեն ունեցել, որովհետև իրենց մեղքն անհրաժեշտ էր՝ ուրիշներին օգուտ տալու համար:
Մարդասպանության մեղքի համար նրանք կասեն, թե դա մեկ ուրիշի մահվան համար վրեժխնդիր լինելու համար էր:

Անառակության մեղքի համար նրանք կասեն, թե դա իրենց ընտանիքին օգնելու համար էր, որպեսզի սեղանին ուտելիք դրվեր:
Աբորտի մեղքի համար նրանք կասեն, թե դա մոր կյանքին օգուտ տալու համար էր և նրա կյանքն ավելի հեշտացնելու: Սեռական շեղումների համար նրանք կասեն, թե դա պարզապես մի բնական բան էր:
Օկուլտով զբաղվողների համար նրանք կասեն, թե դա անվնաս զվարճություն է, սակայն նրանք պատվում են գազանին, երբ այդպես են վարվում:
Երբ հետապնդում են ուրիշներին և ոչնչացնում ոչ միայն նրանց անունը, այլև՝ ապրուստը, կասեն թե դա մի անհրաժեշտ պատիժ էր ուրիշների մեղքերի համար:
Երբ ոչնչացնում են մեկ այլ անձնավորության մտքով, մարմնով և հոգով բռնապետության միջոցով, կասեն թե դա նրանց սեփական բարօրության համար էր:
Երբ փորձեն Իմ եկեղեցիներում պղծությունից Խորհուրդ ստեղծել, կասեն թե դա համասեռ զույգերի իրավունքների պատճառով էր, ովքեր ունեն նույն իարվունքները, ինչ մյուսները:
Երբ նրանք ավերեն Իմ եկեղեցին ներսից, կասեն թե բոլոր եկեղեցիները հավասար են: Նրանք կօգտագործեն պատճառաբանությունը թե միայն մեկ Աստված կա, ուստի կարող են ներմուծել հեթանոս եկեղեցի:
Այս մեղավորներն այն կորած հոգիներն են, որոնց մասին Ես խոսում եմ:
Նրանց օգնելու համար դուք առաջին հերթին պետք է նայեք նրանց աչքերի մեջ: Մտածեք նրանց մասին ինչպես ձեր երեխաների կամ եղբայրների ու քույրերի: Տեսեք նրանք Աստծո Աչքերով: Հետո սեր կզգաք: Բայց սարսափը կլցնի ձեզ, որովհետև ձեր սրտում գիտեք այն սարսափը որը կկանգնի նրանց դեմ: Ինչպես պետք է աղոթեք, որ նրանք տեսնեն Ճշմարտությունը, շուտով:
Ինչպես պետք է աղոթեք այդ հոգիների փրկության համար:
Աստծո յուրաքանչյուր զավակ, ներառյալ նրանք, ում հոգիները սև են, սիրված է: Նրանց մեղքերը պետք է ոչնչացվեն նախքան Աստծո բոլոր զավակները կկարողանան միավորվել որպես մեկ ընտանիք Իմ Նոր Թագավորության մեջ:
Քեզ, աղջիկս, տրվել են բոլոր շնորհները և զինապաշարը ոչնչացնելու մեղքը և փրկելու ոչ միայն քո սեփական հոգին, այլև՝ ուրիշներինը:
Շնորհակալ եմ, աղջիկս, որ պատասխանեցիր Իմ Կանչին:
Դու շատ աշխատանք ունես անելու:
Ձեր Հիսուս

Դուք չպետք է թույլ տաք որ ապագայի հանդեպ վախը հաղթի ձեզ, քանի որ դա Իմ ցանկությունը չէ

Կիրակի, 21 հոկտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 05:50

Իմ սիրելի աղջիկ, այնքան շատերը, ովքեր ընդունում են Իմ Պատգամները, առանց անհրաժեշտության անհանգստանում են աշխարհի ապագայի համար: Դա հասկանալի է:
Նրանք երբեք չպետք է զգան թե ամեն ինչ պետք է ցած գցեն և անտեսեն իրենց ամենօրյա կյանքը, մերժեն իրենց աշխատանքը, ընտանիքը, կամ սիրելիներին, հոգիներ փրկելու համար:

Ես՝ ձեր Հիսուսը, միշտ խնամք կտանեմ Իմ յուրայինների հանդեպ: Դուք Ինձնից վախենալու ոչինչ չունեք: Ես միայն խնդրում եմ ձեր աղոթքները՝ հոգիներ փրկելու համար:
Դուք չպետք է թույլ տաք որ ապագայի հանդեպ վախը հաղթի ձեզ, քանի որ դա Իմ ցանկությունը չէ:
Այնուամենայնիվ, Ես ակնկալում են ձեր ժամանակը աղոթքի և զոհաբերության համար, ինչպես Ես ձեզ ասել եմ այս Պատգամներում: Սակայն շարունակեք ձեր ամենօրյա կյանքը, չնայած Իմ Սուրբ Խոսքն ընդմիշտ կփոխի այն ձևը, որով դուք նայում եք կյանքին:
Դուք երբեք նույն ձևով չեք զգա աշխարհիկ բարիքները, ինչպես դրանք զգացել եք անցյալում: Մինչ դրանք կշարունակեն լինել ձեր կյանքի մի մասը, դրանք այլևս չեն լինի ձեր կյանքի տերը:
Դուք պետք է հիշեք, որ չեք կարող ծառայել երկու տիրոջ քանի որ մեկը կա, և դա Աստված է:
Ես չեմ ակնկալում Իմ աշակերտներից ամեն ինչ թողնել և հետևել Ինձ: Ես չեմ ակնկալում Իմ աշակերտներից թողնել իրենց ամենօրյա պարտականությունները՝ հետևելու համար Իմ Պատգամներին: Ոչ, Ես միայն ձեր սերն եմ խնդրում: Դուք պետք է հետևեք Աստծո Օրենքներին: Ապրեք ձեր կյանքը Իմ Ուսուցումների համեմատ: Պատվեք Խորհուրդները: Սեր ցույց տվեք միմյանց հանդեպ և աղոթեք նրանց հոգիների համար ովքեր չեն օգնի իրենք իրենց:
Գնացեք խաղաղությամբ, այն գիտությամբ,որ Իմ Գթասրտությունը մեծ է, և մարդկության հանդեպ Իմ Սերը կհաղթահարի գազանի արարքները և այն սարսափելի տառապանքը, որը նա պարտադրում է աշխարհին:
Եղեք խաղաղության մեջ: Ես օրհնում եմ ձեզ:
Ձեր Հիսուս

Ես ցանկանում եմ կոչ անել Աստծո բոլոր զավակներին ԱՄՆ-ում

Երեքբթի, 23 հոկտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 08:30

Իմ սիրելի աղջիկ, Ես ցանկանում եմ կոչ անել Ամերիկայի Միացյալ Նահանգների Աստծո բոլոր զավակներին աղոթելու իրենց հավատի համար:
Ճիշտ ինչպես կլինի մյուս քրիստոնյա երկրներում, ձեր հավատը հարձակման կենթարկվի, և ամեն փորձ կարվի սրբելու համար Իմ՝ ձեր Հիսուսի բոլոր հետքերը:
Դուք պետք է կազմեք որքան կարող եք շատ աղոթախմբեր, որպեսզի Իմ Սուրբ Սրտի միջոցով միավորված լինելով ձեզ տրվեն շնորհները՝ դիմագրավելու այդպիսի հալածանքը:
Ժամանակի ընթացքում քրիստոնեական հավատքը կարգելվի, այլ կրոնների հետ միասին, որոնք պատվում են Իմ Հորը:
Դուք, Իմ սիրելի հետևորդներ, կպաշտպանվեք երկնքից, բայց դուք պետք է աղոթեք զորության համար, քանի որ դեմոկրատիայի փոփոխությունը պատրաստ է գլխիվայր շրջվելու՝ ներքևից վերև:
Որպես աշխարհում դեմոկրատիայի միջոցով ազատություն հռչակող ամենամեծ ազգ,

շուտով ձեզ կմերժեն քրիստոնյա լինելու իրավունքը:
Այդ իրավունքը, չնայած այն կմերժվի ձեզ, կերևա որպես դեմոկրատական շարժ: Նոր օրենքները, որոնք շուտով կներմուծվեն ձեր ազգի մեջ, կդիտվեն որպես ընդգրկուն օրենքներ, այնպես որ յուրաքանչյուր ոք պաշտպանված լինի մեկ համաշխարհային կրոնի ներքո:
Այդ օրենքները կպղծեն Իմ Սուրբ Անունը, բայց Ես ձեզ չեմ լքի: Ես կտամ ձեզ այն ողջ օգնությունը, որի կարիքը կունենաք: Դուք միայն պետք է խնդրեք Ինձ:
Ես դիտում և պաշտպանում եմ ձեզ, մինչ քրիստոնեական եկեղեցիների խորտակման ժամանակը մոտ է:
Նրանք կփակեն Իմ եկեղեցիները, կկեղծեն Իմ Խորհուրդները, որպեսզի դրանք անօգուտ դառնան, կվհատեցնեն Իմ սրբազան սպասավորներին և կհիմարացնեն ձեզ, բայց դա օգուտ չի ունենա: Նրանց զորությունը չի համապատասխանի ձեր հավատի պարզությանը, հոգու խոնարհությանն ու Իմ՝ ձեր Հիսուսի հանդեպ ունեցած սիրուն:
Ձեր սիրող Փրկիչ
Հիսուս Քրիստոս

Դուք երբեք չպետք է մերժեք մասնավոր հայտնություններն առանց պահանջվող որակավորումների կամ խոնարհության

Չորեքշաբթի, 24 հոկտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 09:11

Իմ սիրելի աղջիկ, կարևոր է որ դու չլսես նրանց, ովքեր հարձակվում են Իմ Սուրբ Խոսքի վրա:
Փակիր ականջներդ այն փորձերի դեմ, որոնք հիմա կարվեն հատկապես նրանց կողմից, ովքեր հայտարարում են թե իրենք կաթոլիկ աստվածաբաններ են, մերժելու համար Իմ Սուրբ Պատգամները:
Ինչպես Ես ասել եմ քեզ, ամենամեծ հարձակումները կլինեն կաթոլիկ եկեղեցուց նրանց կողմից ովքեր հայտարարում են թե ճանաչում են Ինձ, **բայց ովքեր չեն հասկանում Հայտնության գիրքը, ոչ էլ նրանում պարունակվող գաղտնիքները:**
Նրանք չեն կարող իմանալ դա, քանի որ Ես՝ Աստծո Գառը, դեռևս ամեն ինչ չեմ բացահայտել նրանց:
Որքան են նրանք հիասթափեցնում Ինձ: Որքան են նրանք վիրավորում Ինձ: Իմ Պատգամներին հասցված նրանց ամեն դաժան նետի համար նրանք մեկ այլ մեխ են մխրճում Իմ Մարմնի մեջ:
Իմ յուրաքանչյուր հրահանգի համար, որ Ես տալիս եմ բոլոր հոգիների բարիքի համար, որը նրանք մերժում են կտրականապես, նրանք նորից խաչում են Ինձ:
Սակայն նշանակություն չունի թե նրանք որքան են Ինձ վիրավորում, քանի որ Ես հազար անգամ կմեռնեի, միայն թե ևս մեկ հոգի փրկվեր:
Նրանք կարող են հեռացնել Իմ Պատգամները, ծաղրել քեզ, աղջիկս, և մերժել Ինձ, բայց նրանք չեն կարող արգելել Իմ Հոր Կամքը վերջնական ավարտման հասցնելուց:
Այդ խեղճ հոգիները հավատում են, թե իրենց պարտականությունն են կատարում՝ ասելով մարդկանց որ չընդունեն Իմ Պատգամները:
Այն, ինչ նրանք անում են՝ արգելելն է, որ Աստծո Խոսքը ներկայացնվի Աստծո

զավակներին: Եթե նրանք շարունակեն այդ անել, նրանք կլռեցվեն Իմ Հոր Ձեռքով:
Ոչ մի մարդ Ինձ չի կանգնեցնի հոգիներ փրկելու Իմ որոնման մեջ:
Այն սրբազան սպասավորները ովքեր համառում են փակելով Իմ Խոսքը որ չլսվի, իմացեք հետևյալը:
Ձեր մշտական խոսքերն ու ձեր հայհոյական մեղադրանքները կմերկացնեն ձեզ այն շնորհներից, որոնք տրվել են ձեզ ձեր կոչման համար: Մինչև չկանչեք Ինձ ձեր աղոթքի մեջ այն պատասխանների համար որոնց կարիքն ունեք, Ես չեմ կարողանա օգնել ձեզ:
Դուք երբեք չպետք է մերժեք մասնավոր հայտնություններն առանց պահանջվող որակավորումների և խոնարհության: Նույնիսկ այդ դեպքում, դուք երբեք չեք կարող դատել այսպիսի հոգիներին: Լուռ մնացեք:
Միշտ աղոթեք զանազանության ընծայի համար: Այլապես մեղավոր կլինեք Իմ Հոր Աչքում ամենավատ ոճրի մեջ՝ Նրան Իր Որդու Սուրբ Խոսքի միջոցով հոգիներ փրկել խանգարելու ոճրի մեջ:
Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Իմ Որդու մնացորդ բանակի աճը կշարունակվի

Հինգշաբթի, 25 հոկտեմբերի, 2012թ, առավոտյան ժ 07:30

Ձավակս, ամբողջ աշխարհում ավելի ու ավելի շատ մարդիկ են ձգվում դեպի այս Սուրբ պատգամները, քան երբևէ:
Շատերը չեն հասկանում այս պատգամների իսկական նպատակը: Նրանք պետք է իմանան, որ դրանք ընծա են մարդկությանը, որպեսզի դարձ բերեն:
Դրանք տրվում են աշխարհին, որպեսզի հոգիներին բերեն աղոթքի սովորության մեջ և որպեսզի մարդիկ մասնացեն Սուրբ Խորհուրդներին:
Ամենից առավել, այս պատգամները բերում են հոգու հանդարտություն և խաղաղություն, որպեսզի ավելի ու ավելի շատ Աստծո զավակներ արժանի լինեն մտնելու Նոր Դրախտը:
Այս Պատգամների պտուղների շնորհիվ Աստծո զավակների հավատքը կվկայվի:
Իմ Որդու մնացորդ եկեղեցու աճը կշարունակվի այս և ուրիշ սուրբ պատգամների պատճառով, որոնք տրվում են ճշմարիտ տեսանողներին աշխարհով մեկ:
Աստված այնքան շատ է սիրում Իր զավակներին, որ ամեն ինչ կարվի՝ վստահանալու համար, որ բոլոր հոգիները կհասնեն փրկության:
Իմ Որդին լավ է նախապատրաստվել, Նրա պլանները, որոնց պետք է հասնել այդ պատգամների միջոցով, կիրականանան:
Ահա թե ինչու դուք երբեք չպետք է հուսահատ զգաք:
Հույսն այն ամենն է, ինչ կարևոր է:
Վստահեք Իմ Որդուն երբ ամբողջապես հանձնվում եք Նրա առջև, դա նշանակում է որ Նա կարող է ավարտել յուրաքանչյուր մեղավորի փրկության Իր պլանները Իր հանդեպ ձեր նվիրվածության միջոցով:
Դուք պետք է խոստում տաք, զավակներս, ընդունել Նրա ցուցումները, և Նրա Սերը

կպարուրի ձեզ, որ ձեզ ուժեղ դարձնի:
Ձեր Մայր
Մայր Փրկության

Ես ցանկանում եմ, որ Իմ բանակն ասի այս խաչակրաց աղոթքը Մնացորդ եկեղեցու հաղթանակի համար

Հինգշաբթի, 25 հոկտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 09:50

Իմ սիրելի աղջիկ, դու պետք է խրախուսես Իմ բոլոր հետևորդներին շարունակել ամենուր աղոթախմբերի հիմնումը:
Ժամանակը եկել է որ Ես կանչեմ և հավաքեմ ձեզ բոլորիդ կազմելու համար Իմ բանակը, որպեսզի դեպի հավիտենական հաղթանակը քայլելը կարողանա սկսվել հենց այսօր:
2012թ. նոյեմբերի 9-ին, Իմ կողմից քեզ առաջին անգամ կանչի երկրորդ տարելիցին, աղջիկս, Ես ցանկանում եմ որ Իմ բանակն ասի այս Խաչակրաց աղոթքը Մնացորդ եկեղեցու հաղթանակի համար:
Խաչակրաց աղոթք (82) Մնացորդ եկեղեցու հաղթանակի հիամար.
Հիսուս, աշխարհի Թագավոր և Փրկիչ, Քեզ ենք մենք տալիս պատիվ, հավատարմություն և գործեր՝ Քո Փառքը բոլորին հռչակելու համար:
Օգնիր մեզ ձեռք բերել այն ուժն ու վստահությունը, որ կանգնենք և հայտարարենք ճշմարտությունը միշտ:
Երբեք թույլ մի տուր մեզ տատանվել կամ հապաղել դեպի հաղթանակ մեր քայլքի մեջ և հոգիներ փրկելու մեր ծրագրում:
Մենք խոստանում ենք հանձնվել, տալ մեր սրտերը և այն ամենն ինչ ունենք, որ ազատ լինենք խոչընդոտներից, մինչ կշարունակենք դեպի Նոր Դրախտի դարպասները տանող փշոտ ճանապարհը:
Մենք սիրում ենք Քեզ, թանկագին Հիսուս՝ մեր Փրկիչ և Ազատարար:
Մենք միավորվում ենք մարմնով, մտքով և ոգով Քո Սուրբ Սրտի ներսում:
Հեղիր մեզ վրա Քո Պաշտպանության Շնորհը:
Ծածկիր մեզ Քո Թանկագին Արյամբ, որպեսզի մենք լցվենք արիությամբ և սիրով, կանգնելու համար և հայտարարելու Քո Նոր Թագավորության մասին ճշմարտությունը: Ամեն:
Ես խնդրում եմ ձեզ, Իմ սիրելի հոտևորդներ, որ հավաքվեք,աճեք և տարածեք Իմ Սուրբ Խոսքը յուրաքանչյուր ազգի: Ես խնդրում եմ, որ դուք ուշադրությունը բևեռեք ԻՆՁ վրա, միշտ, և աշխատեք Ինձ հետ դեպի փրկության վերջնական հաղթանակը:
Ձեր Հիսուս

Նրանք կքննեն ու կվերլուծեն Իմ Խոսքը՝ սարսափելի սխալ կատարելու վախից

Ուրբաթ, 26 հոկտեմբերի, 2012թ, առավոտյան ժ 11:06

Իմ սիրելի աղջիկ, այնքան շատ աշխատանք պետք է կատարվի Իմ հետևորդների կողմից, մաքրելու համար երկիրն այն թունավորումից, որը տարածվում է վերմակի պես շատ մարդկանց վրա ովքեր չեն ճանաչում Աստծուն:
Այնքան շատերն են թափառում աշխարհում առանց ուղղության որևէ զգացողության: Նրանք դատարկ են հոգևոր զգացմունքներից և անգրագետ՝ Աստծո Միրո մասին: Նրանք այն հոգիներն են, որոնց Ես ձգտում եմ, և որոնց Ես ցանկանում եմ գրկել Ճշմարտությամբ:
Դուք, Իմ հետևորդներ, պետք է գնաք նրանց մոտ և **ասեք նրանց, որ Ես՝ Հիսուս Քրիստոսը, մարդու Որդին, Մեսիան, շուտով կգամ:** Նրանք պետք է իմանան, որ իրենք մի կողմ չեն նետվի, քանի որ այդ ձեր՝ այս սերնդի պատճառով է, որ Ես գալիս եմ այս ժամանակ:
Ուրիշ շատերը, ովքեր հոգևորապես գիտակցում են Աստծո գոյությունը, կհետաքրքրվեն, բայց կտատանվեն ընդունել Իմ պատգամները:
Մյուսները, ովքեր հռչակում են Իմ Խոսքը, և ովքեր նվիրված քրիստոնյաներ են, հոգնած և դանդաղ կլինեն գրկելու համար այն ամենն, ինչ Ես ասում եմ:
Նրանք կքննեն ու կվերլուծեն Իմ Խոսքը՝ սարսափելի սխալ կատարելու վախից: Նրանք վախենում են, թե իրենց սուտ կտրվի:
Կլինեն նաև հոգևորականներ քրիստոնյա եկեղեցիներում, ովքեր կբարձրանան և կպատասխանեն Իմ Կանչին: Ոմանք կպատասխանեն արագորեն, քանի որ կզգան Իմ Միրո ներխուժումն իրենց երակների մեջ, երբ կարդան Իմ պատգամները:
Մյուսները վայրկենական կանչ կզգան Իմ Սուրբ Խոսքում պարունակվող Սուրբ Հոգու Իմ Ընծայի միջոցով: Ոմանք ավելի զգուշավոր կլինեն քան մյուսները, բայց ժամանակի ընթացքում նրանց թիվը կավելանա միլոններով:
Ահա թե ինչու, դուք, Իմ հետևորդներ, պետք է տոկաք: Մինչ սկզբում շատերը կմերժեն ձեզ Իմ Անվամբ, դա կփոխվի: Երբ Ճշմարտությունը լայնորեն ճանաչվի և ողջունվի, ձեզ կփնտրեն: Իմ Խոսքին կվերաբերվեն սիրով և հարգանքով, չնայած այդպես անելով, այդ հոգիները կտառապեն:
Նշանակություն չունի թե որքան ճնշում կլինի Իմ դեմ Իմ, քանի որ Իմ առաքելությունը չի ձախողվի:
Դիմացեք այդպիսի ճնշմանը: Ընդունեք, որ մեղադրանք կնետվի ձեզ վրա այս պատգամների պատճառով:
Դա սպասելի է, երբ Աստծո Խոսքը դուրս է հեղվում երկրի վրա: Խավարի մեջ գտնվողները չեն ընդունի Իմ Խոսքը, քանի որ այն կվնասի իրենց կյանքին:
Այն կստիպի նրանց վերագնահատել իրենց հավատալիքները, որոնց նրանք չեն ցանկանա դիմակայել:
Իմ Խոսքն ընդունել կնշանակի, որ նրանք ստիպված կլինեն փոխել իրենց ուղիները: Ցավոք նրանք ցանկություն չունեն փոխել իրենց ուղիները, քանի որ դա իրենց չի դիմի:
Ես չեմ հանգստանա, մինչև չբացեմ նրանք աչքերը Ճշմարտության հանդեպ: Ոչ էլ սպասում եմ, որ դուք, Իմ աշակերտներ, կանգ առնեք, մինչև որքան հնարավոր է շատ մարդիկ միավորվեն Աստծո Աչքում:
Ձեր Հիսուս

Նրանք, ովքեր նվաստացնում են Իմ Խոսքը, որը տրվում է քեզ, աղջիկս, կտրում են Ինձ մինչև ոսկորներս հոգևարքի ցավով

Ուրբաթ, 6 հոկտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 06:00

Իմ սիրելի աղջիկ, երկրի վրա Իմ Թագավորությունը իրականություն դառնալու վրա է: Իմ սիրելի Հոր կողմից այդքան վաղուց խոստացված Նոր Թագավորությունը՝ Նոր Դրախտը,ամենամեծ ընծան է:
Իմ Նոր Թագավորությունը հասկանալու գաղտնիքն ընկած է Գեթսեմանիի պարտեզում Իմ տառապանքի առեղծվածի մեջ: Երբ Ես ընկա Իմ Հոր առջև, վշտից լաց լինելով, դա ապագայում այն հոգիների կորուստի պատճառով էր, ովքեր վառվելու էին դժոխքի կրակների մեջ չնայած Խաչի վրա Իմ Զոհաբերությանը:
Իմ նվաստացումը պոնտացի Պիղատեսի առջև ցավոտ էր ոչ թե հանրային վիրավորանքի պատճառով, այլ այն պատճառով, որ Ես գիտեի որ այդ հոգիները կորած են լինելու Ինձ համար: Եվ ուստի Ես լացում էի տխրության արցունքներով մինչ դիտում էի նրանց՝ խաբված Սատանայի կողմից՝ մի չար ուժ, որին նրանք չէին կարող տեսնել, բայց ով ներթափանցել էր նրանց էության ամեն հյուսվածքի մեջ:
Երբ դու ԻՆՁ տեսնում ես անհանգստացած, աղջիկս, դա իր պատճառն ունի: Այն հոգիների համար, ովքեր վիրավորանքներ են նետում այս պատգամների վրա, նրանց համար նույնպես Ես ողբում եմ: Նրանք Ինձ հետ ամբողջական միության վիճակի մեջ չեն: Հպարտության, մեծամտության, գիտելիքի և խոնարհության պակասի նրանց մեղքի պատճառով նրանք վիրավորում են Իմ խոսքը:
Հետո նրանք փորձում են արգելել նրանց սրտերին, ում Ես ցանկանում եմ հասնել, որ գրկեն Իմ Սուրբ Խոսքը:
Նրանց համար նույնպես Ես ողբում եմ, քանի որ նրանք չգիտեն իրենց գործողությունների լուրջ հետևանքները, մինչ դավաճանում են Իմ Ճշմարիտ Խոսքին, մինչ այն ներկայացվում է Աստծո զավակներից յուրաքանչյուրին այս ժամանակ:
Այնքան շատ հոգիներ կկորչեն, զրկված Իմ Խոսքից նրանց գործողությունների պատճառով, ովքեր ասում են, թե աշխարհում Ինձ են ներկայացնում:
Ես այսօր տառապում եմ ճիշտ այնպես, ինչպես տառապեցի սոսկալի հոգևարք նրանց ծաղրանքներից, ովքեր կանգնած էին պոնտացի Պիղատոսի ոսկե գահի կողքին: Ես տառապում եմ այսօր: Ցավը, որը Ես կրում եմ քո միջոցով, աղջիկս, տարբեր չէ այսօր նրանից, որն այդ ժամանակ էր:
Նրանք ,ովքեր նվաստացնում են քեզ տրվող Իմ Խոսքը, աղջիկս, կտրում են Ինձ մինչև ոսկորներս հոգևարքի ցավով:
Նրանք մեխել են վերջին մեխերը Իմ տառապող հոգու միջով, մինչ Ես մեկ անգամ ևս փորձում եմ փրկել մարդկային ռասան ոչնչացումից:
Աղոթեք, որ Իմ Հայրն Իր Գթասրտությամբ հանդուրժող կլինի այդպիսի հոգիների հանդեպ, ովքեր ձգտում են Խաբեբայի միջոցով թուլացնել Աստծո Խոսքը:
Զգուշացեք, զավակներս, նրանցից, ովքեր կտրականապես կդիմադրեն այս պատգամներով տրվող Իմ խոսքին: Դուք պետք է աղոթեք նրանց հոգիների համար:
Ձեր Հիսուս

Նրանց ձեռքով կլինի, որ կայծակները, երկրաշարժերն ու ցունամիները կհարվածեն երկրին

Շաբաթ, 27 հոկտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 09:35

Իմ սիրելի աղջիկ, գլոբալ քարոզչություն ծավալելու պլան կա:
Այդ քարոզչությունն Աստծուց չի լինի: Այլ այն կքարոզի մի սուտ, որը կհաստատի թե Աստված գոյություն չունի և չի կարող գոյություն ունենալ:
Նրանք կասեն, օգտագործելով մարդկային մտածողությունն ու գիտական գնահատումները, թե Աստված մարդու երևակայության մի մասնիկ է պարզապես:
Այս քարոզչությունը պատահականություն չէ, քանի որ այն մի լավ պլանավորված և կորդինացված արշավ է, նյութված այն աթեիստների կողմից, ովքեր հավատարմության երդում են տվել չարին:
Նրանց սրտերը, մտքերն ու հոգին գողացվել են Սատանայի կողմից, ով օգտագործում է մարդկային բանականության նրանց հպարտությունը՝ մեծամտորեն ստեր հռչակելու համար, որպեսզի խանգարեն ճշմարտությանը:
Սա մի պլան է, ամենուր մարդկանց սրտերը քար դարձնելու, ճիշտ ինչպես իրենց սեփական սրտերն են սառն ու առանց սիրո: Հետո կլինի հայտարարություն, որ մի նոր փոխարինող կրոն կներմուծվի օրենքի մեջ:
Մեկ համաշխարհային կրոնը կպատվի գազանին, որովհետև խավարի թագավորի ստրուկների ձեռքով է որ այդ վայրագությունը կիրագործվի:
Այն աթեիստները, ովքեր կղեկավարեն այդ պլանը, Սատանայի նվիրյալ հետևորդներն են:
Չսխալվեք, նրանք կռապաշտում են գազանին և ոչինչ չեն մտածում այն վիրավորանքի ու տառապանքի մասին, որը նրանց գործողությունները կբերեն:
Նրանց առաքելությունը մեկ Ճշմարիտ Աստծո հանդեպ նվիրվածությունը վերացնելն է: Այն Աստծո, ով սիրում է Իր ստեղծած յուրաքանչյուր զավակի: Նրանք կմերժեն այն ջանքերը, որոնք հիմա արվում են Երկնքի կողմից՝ մարդկության հավիտենական դատապարտումից փրկելու համար:
Նրանց ձեռքով կլինի, որ կայծակները, երկրաշարժերն ու ցունամիները կհարվածեն երկրին:
Նրանք կկանգնեցվեն:
Նրանք սոսկալի կերպով կտառապեն, և նրանց հոգևարքով վերջը կանխասացվել է:
Արմագեդդոնի մարտը դաժան կլինի, քանի որ Աստված այլևս ետ չի նստի և թույլ չի տա այդպիսի թունավորում:
Մեծ ուժգնության սոսկալի երկնային պատիժներ կսրբեն այն հեթանոսներին, ովքեր մերժում են Աստծո Խոսքը:
Աղոթքը՝ Աստծուն, Գթասրտություն խնդրելով, միակ ճանապարհն է այդպիսի երկնային պատիժները մեղմելու համար:
Ձեր աղոթքները, որոնք աղերսում են թողություն նրանց հոգիների համար, միակ ճանապարհն է, որով այդպիսի հոգիները կարող են փրկվել:
Աղջիկս, շավ ավերումներ կլինեն այն չար աշխատանքի հետևանքով, որն այդ աթեիստ խմբերը մտադիր են պարտադրել երկրի վրա:
Շատերը չգիտեն իրենց գործողությունների լրջությունը:
Այնուամենայնիվ, շատերը գիտեն ճշտորեն թե իրենք ինչ են անում, քանի որ

ստախոսներ են:
Նրանք հավատում են Աստծուն, քանի որ ընտրել են Նրա հակառակորդին՝ (nemesis) սատանային, որպես իրենց աստված, իրենց սեփական ազատ ընտրությամբ:
Նրանց ցանկացածը հոգիներ գողանալն է:
Աստված՝ Իմ Հայրը, կմիջամտի Իր զորությամբ, ոչ միայն սոսկ նրանց պատժելու համար, այլև հոգիներ փրկելու համար, քանի դեռ դրանք չեն գողացվել Իրենից:
Ձեր Հիսուս

Հայր Աստված. Ստախոսների կողմից վարակված անմեղ հոգիներին փրկելու համար է, որ Ես պատժում եմ չարերին

Կիրակի, 28 հոկտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 06:00

Իմ սիրելի աղջիկ, Աստվածային Գիտելիքը ընկալվում է Իմ զավակներից միայն մի քանիսի կողմից, և նույնիսկ այդ դեպքում, այնքան, որքան Ես թույլ եմ տալիս նրանց իմանալ:
Իմ Սուրբ Խոսքը շատերի համար դժվար է հասկանալ, բայց չնայած դրան, այն շատ պարզ է:
Ես սիրում եմ Իմ զավակներին, բայց նրանք խլվեցին Ինձնից երբ Ադամն ու Եվան կորցրեցին իրենց իրավունքը Իմ Աստվածային Թագավորության նկատմամբ:
Նրանք իրենց մեջքը շրջեցին հավիտենական կյանքի հանդեպ, և դրա պատճառով նրանց բոլոր զավակները տառապեցին սերունդ սերնդի ետևից:
Այդ ժամանակ Իմ Որդին ուղարկվեց՝ փրկելու համար Իմ զավակներին հավիտենական դժոխքից՝ նրանց մեղքից ազատագրելու միջոցով: Հիմա Նա կգա երկրի վրա ներշնչելու սկզբնական դրախտը, որը նախատեսված էր:
Աջիկս, հիմա նախապատրաստություններ են տարվում հոգիների համար մարտը սկսելու:
Ասա Իմ զավակներին, որ Ես հեղում եմ յուրահատուկ շնորհներ իրենց վրա:
Այդ շնորհները նրանց լրացուցիչ ուժ կտան, երբ նրանք աղոթեն՝ երկնային պատիժները մեղմացնելու համար: Իմ զավակներն իրենց աղոթքների և խնդրանքների միջոցով կարող են ոչ միայն փրկել հեթանոսների հոգիները, ովքեր վիրավորում են Ինձ, այլև կարող են բռնել Իմ Ձեռքը, որը կիջնի՝ կանգնեցնելու համար նրանց, ովքեր խոսում են գազանի անունից:
Ես պատժում եմ Իմ զավակներին, որ չար են սրտով: Ես դա անում եմ ոչ միայն պատժելու համար նրանց, ովքեր սոսկալի չարիք են պատճառում, այլև կանգնեցնելու նրանց իրենց ստերի միջոցով հոգիներ գողանալուց:
Ստախոսների կողմից վարակված անմեղ հոգիների համար է, որ Ես պատժում եմ չարերին:
Իմ զավակները պետք է ուժեղ լինեն հանուն բոլորի:
Աղոթքը կլինի այն զենքը, որը կկոտորի գազանին: Թունավորումը չի դադարեցվի պատերազմի միջոցով, բարձր տեղերում ընտրվածների զորության միջոցով, ոչ էլ նրանց միջոցով ովքեր առաջնորդում են Իմ եկեղեցիները երկրի վրա: Աշխարհը կփրկվի նրանց հավատի միջոցով, ովքեր հավատարիմ են Ինձ՝ Ամենաբարձրյալ

Աստծուն, և նրանց միջոցով, ովքեր ընդունում են Իմ Որդի Հիսուս Քրիստոսին որպես Փրկիչ:
Դուք, Իմ հավատարիմ զավակներ, կլինեք փրկության բանալին Իմ բոլոր զավակների համար: Ձեր աղոթքները կլսվեն: Մեղավորներին փրկելու ձեր խնդրանքներին պատասխան կտրվի:
Ես սիրում եմ ձեզ: Ես շնորհակալ եմ այն սիրո համար, որը ցույց եք տալիս Իմ Որդու հանդեպ, և Ես օրհնում եմ ձեզ:
Ձեր սիրող Հայր
Աստված Ամենաբարձրյալ

Աշխարհում մինչ այժմ չտեսնված հզորության մեծ երկնային պատիժները կարող են մեղմացվել

Երկուշաբթի, 29 հոկտեմբերի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, Ես ասել եմ, որ փոփոխության ալիքը սկսվել է, մինչ Իմ Հոր Ձեռքը հիմա իջնում է երկնային պատժով ոչ միայն ԱՄՆ-ում, այլև այլ երկրներում:
Այդ էկոկոգիական տանտանումները կշարունակվեն ամենուր, մինչև մարդկությունը մաքրագործվի:
Դուք պետք է աղոթեք, որ այն հոգիները, որոնք մերժում են Աստծուն, կարողանան փրկվել դժոխքի կրակներից այլոց առատաձեռնության, նրանց աղոթքների միջոցով:
Այդ նշանները ցույց տալու համար են մարդկությանը, որ ժամանակներն իրոք փոխվել են: Ոչինչ չի կարող և չի լինի նույնը մինչև երկիրը չմաքրագործվի՝ հնարաորություն տալով, որ Երկրորդ Գալուստը տեղի ունենա:
Այս պահին, երբ մեղքը ավերում է երկիրը, այն արժանի չէ ստանալու Մեսիային:
Այս նշանները ժամանակի վերջի նշաններն են, Իմ հետևորդներ, և դուք պետք է նախապատրաստեք ձեր հոգիները:
Շատ շուտով շատ քչերը կլինեն, ներառյալ քարսիրո աթեիստները, ովքեր կկարորղանան անտեսել Իմ Հոր Ձեռքը:
Այնուամենայնիվ, աշխարհում մինչ այժմ չտեսնված հզոր երկնային պատիժները կարող են մեղմացվել և թուլացվել ձեր աղոթքների միջոցով:
Սակայն դրանք կշարունակվեն մինչև մարդկությունն ընդունի Ճշմարտությունը:
Տիրոջ օրը, Երկրորդ Գալուստի օրը, մոտենում է, չնայած սկզբում շատ իրադարձություններ պետք է տեղի ունենան:
Սա կլինի դժվար ժամանակ Աստծո բոլոր զավակների համար, ներառյալ նրանց, ովքեր ունեն ուժեղ հավատ: Սակայն նրանք, ովքեր ցույց են տալիս սեր և հավատարմություն Ինձ՝ իրենց Հիսուսին, շատերը կլինեն խաղաղության մեջ, քանի որ գիտեն որ Ես գալիս եմ՝ իրենց Նոր Դրախտի մեջ բերելու:
Այս Նոր Թագավորության մարգարեությունը պետք է փնտրել, և դուք պետք է տնեչաք այդ մեծ Ընծային:
Ուժեղ մնացեք և վստահեք Ինձ: Դուք պետք է հասկանաք, որ Իմ Հայրը պետք է պատժի նրանց, ովքեր սոսկալի գործողություններ են պլանավորում: Նա խոստացել է կանգնեցնել նրանց գործողությունները, և նրանք կսրբվեն կքշվեն:
Հիմա երկրի յուրանքանչյուր անկյունում կերևան նշանները, վստահեցնելու համար,

որ մարդկությունը կարող է կասկած չունենալ թե ում զորությունն է գործում: Միայն Աստված է կարգադրում այդպիսի զորությանը: Ցանկացած այլ զորություն կարճատև կլինի: Աստծո զորությունն ամենակարող է, և ոչ մի մարդ երբեք չի գերազանցի Արարչին և Ստեղծողին այն ամենի, ինչ տեսանելի է և անտեսանելի:
Ձեր Հիսուս

Այս ժամանակ աշխարհում, Իմ հանդեպ՝ ձեր Հիսուսի հանդեպ հավատի մասին սոսկ նշելը, շփոթություն է ստեղծում

Երեքշաբթի, 30 հոկտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 07:10

Իմ սիրելի աղջիկ, դու պետք է մինչև հիմա իմանայիր, որ տառապանքը, որը կրում ես Իմ Անվամբ, կշարունակվի մինչև այս առաքելության ամենավերջին օրը:
Սա դժվար է քեզ համար լսել, բայց իմացիր հետևյալը: Այս առաքելությունը քեզնից առաջ եղած բոլոր մյուս առաքելություններից ամենադժվարն է: Դու կնետվես անապատ, և մեկուսացված կզգաս ու միայնակ: Քո ձայնը կանտեսվի, բայց Իմ Սուրբ Խոսքը կդիպչի միլիոնավորների սրտերին:
Դու միշտ ուշադրություն կդարձնես Իմ Սուրբ Խոսքին, չնայած երբեմն զգում ես թե բավականին ուժեղ չես լինի:
Քո թուլությունը քո ուժն է, որովհետև դու վստահում ես Ինձ: Այդ պատճառով Ես երբեք չեմ լքի քեզ, ոչ էլ կթողնեմ քեզ առանց ուրիշների օգնության: Սակայն դու պետք է միայնակ քայլես այս առաքելության մեջ: Քո միակ ուղեկիցը կլինեմ Ես: Ես միացնում են մեր տառապանքը մեկի մեջ:
Դու, աղջիկս, միշտ կարիք կունենաս համբերատարության Իմ Շնորհներին: Հեշտ չի լինի դիմանալ այս առաքելությանը և հոչակել Իմ Սուրբ Խոսքը մի անշնորհակալ աշխարհի: Դա կպահանջի վճռականության և արիության մի մեծ զգացում:
Սա վերաբերում է Իմ բոլոր աշակերտներին, ներառյալ նրանց, ովքեր սիրում են Ինձ բայց չեն ընդունում այս պատգամները:
Խոչընդոտները, որոնց կդիմակայեք առաքելության այս մասում, կավելանան բոլորիդ համար, Իմ նվիրյալ բանակ:
Դուք պետք է արժանապատվությամբ ընդունեք, որ երբ հետևում եք Ինձ՝ կտառապեք: Շատ քիչ հոգիներ են կարող դիմանալ այն տառապանքին, որն ազդում է յուրաքանչյուրի վրա ով համամիտ է Իմ Ուսուցումներին:
Այս ժամանակ աշխարհում Իմ հանդեպ՝ ձեր Հիսուսի հանդեպ հավատի մասին սոսկ նշելը շփոթություն է ստեղծում:
Դա ձեզ ոչ միայն տհաճություն է պատճառում, երբ Իմ հանդեպ ձեր հավատարմությունը հանրության մեջ հոչակվում է, դուք կտառապեք Իմ պատճառով: Հիշեք, տառապելը մի յուրահատուկ շնորհ է: Այն շատ դժվար է տանել, և շատ հոգիներ են Ինձնից շրջվում դրա պատճառով: Բայց դուք պետք է հիշեք սա: Երբ տառապում եք Իմ Անվամբ, Ես կբռնեմ ձեզ և ձեր վրա կհեղեմ Իմ Շնորհները: Չնայած ձեր տառապանքներին, դա ձեզ կբերի հոգու խաղաղություն:
Խնդրում եմ, աղջիկս, երբեք տեղի չտաս: Երբեք լքված չզգաս, քանի որ Ես նույնիսկ ավելի մոտ եմ, երբ դու միայնակ ես զգում: Ես նույնիսկ ավելի մոտ եմ քեզ այդ

տառապանքների ժամանակ:Դու պետք է շարունակես խնդրել այն ողջ օգնությունը որը կարող ես ստանալ, ՝ խնդրելով Իմ սիրելի Մորը և բոլոր սրբերին, որ գան քեզ օգնության:
Շատ շուտով դու կընդունես, որ տառապանքի ավելացումը ուղղակի արդյունք է չարի կողմից այս առաքելության հակադրմանը: Նա ծայրահեղորեն վախեցած է, որովհետև նրա մարտն ավարտվում է: Նա ատում է քեզ այն հոգիների պատճառով, ովքեր փրկվում են փրկության այս առաքելության միոցով:
Ձեր Հիսուս